

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Փրկուեցալ՝ Ամերիկայի Ժողովրդավարութիւնը

Նոյեմբեր 8-ին տեղի ունեցած նախագահական կիսաշրջանի ընտրութիւնները յաղթանակ բերին ոչ թէ այս կամ այլ թեկնածուին կամ կուսակցութեան, այլ Ամերիկայի ժողովրդավարութեան, որ վերջին վեց տարիներուն կը գտնուէր ճգնաժամի մէջ:

Սխալ դուրս եկան հարցախոյզերը, քաղաքական մեկնաբանները եւ ընտրական վերլուծաբանները, որոնք մեծ յաղթանակ կը նախատեսէին Զանրապետական կուսակցութեան ու անոր առաջնորդ՝ նախկին նախագահ Տանուտ Թրամփի կողմէ յատուկ առաջադրուած թեկնածուներուն: Սակայն, արդիւնքները եկան ցոյց տալու որ, Ամերիկացի ժողովուրդը կարծուածէն աւելի գիտակից է եւ պատրաստ է իր անձնական շահը մէկդի դնելով քուէարկելու յանուն իր երկրի ապագային:

Շատեր կը կարծէին որ, նախագահ Պայտընի ցած վարկանիշը, սպառողական ապրանքներու սղաճը ու պենզիի բարձր գիները մեծապէս պիտի ազդէն ընտրողներու տրամադրութիւններուն վրայ: Սակայն, արդիւնքները եկան հակառակը փաստելու եւ այս ընտրութիւններու ընթացքին ժողովուրդը նախընտրեց իր ծայրը տալ այն թեկնածուներուն, որոնք կը հաւատային Ամերիկեան ժողովրդականութեան եւ օրէնքներուն:

Նախատեսութիւնը այն էր որ, անխուսափելի էր Դեմոկրատներու պարտութիւնը, իսկ ընդդիմադիր կուսակցութիւնը, այս պարագային Զանրապետականները կը կարծէին թէ, ոչ միայն պիտի տիրանան Ծերակոյտի մէջ մեծամասնութեան, այլ եւ Ներկայացուցիչներու Տան մէջ պիտի ապահովեն 30-60 աթոռի առաւելութիւն: Սակայն, Դեմոկրատները կարողացած պահել Ծերակոյտը եւ կայ հաւանականութիւն, որ անոնք կարողանան մէկ աթոռ եւս ապահովել ճորճիա նահանգին մէջ Դեկտեմբերին տեղի ունենալիք լրացուցիչ ընտրութիւններու աւարտին:

Ընտրութիւններէն մէկ շաբաթ անց, Ներկայացուցիչներու Տան ճակատագիրը տակաւին կը մնայ անորոշ, սակայն մեծ հաւանականութեամբ Զանրապետականները հոն պիտի ունենան 3-4 աթոռի առաւելութիւն:

Զանրապետականներու այս ձախողութիւնը շատեր կը վերագրեն Տանուտ Թրամփին, որ առաջ մղեց թեկնածուներ, որոնք հաւատարմութիւն կը յայտնէին իրեն եւ

## «1998-ին Տեղի է Ունեցել Աղետալի Սխալ. Արցախը Դուրս է Թողնուել Բանակցային Գործընթացից. Եթէ Դա Չլինէր, ԼՂ Զարցը Վաղուց Կարգաւորուել Էր». Փաշինեան

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցի ընթացքին ընդգծեց. «2018 թուականից որեւէ բանակցութեան մէջ իմ արտասանած որեւէ նախադասութիւն չկայ, որից ԼՂ իշխանութիւնը տեղեակ չէ: Ամէն բանակցութիւնից առաջ եւ յետոյ Արալի Յարութիւնեանի հետ զրոյց ենք մենք ունենում: Ինչ ես եմ փոխանցում Արալի Յարութիւնեանին, նա էլ իր հերթին փոխանցում է ԼՂ քաղաքական վերնախաւին»:

Անդրադառնալով Արցախի խորհրդարանի ընդունուած յայտարարութեան եւ հարցին՝ հակասութիւն չկա՞յ, երբ Արցախը կ'ակնկալէ, որ Հայաստանը պէտք է պաշտպանէ իր շահերը, իսկ Հայաստանի կարծիքով՝ Արցախը պէտք է առանձնէ բանակցութիւնը Ատրպէյճանի հետ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը պատասխանեց. «Ոչ, հակասութիւն չկայ իրականում, եթէ հակասութիւն կայ, այդ հակասութիւնն առաջացել է մի շատ մեծ սխալի հետեւանքով, որ 1998 թուականին Արցախը դուրս է



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան Զանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցի ընթացքին

թողնուել բանակցային պրոցեսից. դա աղէտալի սխալ էր, որի հետեւանքները մինչ օրս կրում ենք: Արցախը պէտք է լինի միակ խօսողը ԼՂ ինդրի կարգաւորման եւ ԼՂ հայութեան իրաւունքների պաշտպանութեան վերաբերեալ: Այո, ես շարունակում եմ մտածել այդպէս,

որ, այո, ԼՂ ներկայացուցիչները պէտք է լինեն խօսակցութեան կողմ. սա ԼՂ մեր հայրենակիցների իրաւունքները պաշտպանելու լուսագոյն ձեւն է: Այո, մենք կարծում ենք, որ ԼՂ-ի եւ Ատրպէյճանի

Շար.ը էջ 5

## ՍԴՅԿ Արեւմտեան Ամերիկայի Շրջանը Օժտուեցաւ Նոր Վարիչ Մարմինով

Նոյեմբեր 6-ին կայացաւ Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի շրջանի 21-րդ պատգամաւորական ժողովը՝ մասնակցութեամբ Կուսակցութեան տարբեր մասնաճիւղերը ներկայացնող պատգամաւորներու:

Ժողովի բացումը կատարուեցաւ Կուսակցութեան քայլերգի՝ «Զեռար երկիր»-ի երգեցողութեամբ, որմէ ետք ներկաները յոտնկայս յարգեցին յիշատակը՝ վերջին տարիներուն կեանքէն հեռացած ընկեր ընկերուհիներուն եւ Սեպտեմբերեան պատերազմի ընթացքին զոհուած Զայ զինուորներուն:

Ժողովի սկզբնաւորութեան ՍԴՅԿ Կեդրոնական Վարչութեան ողջոյնի խօսքը փոխանցեց ու յաջողութիւն մաղթեց փոխ-ատենապետ Ընկ. Խաչիկ Քէշիշեան:

Անցնելով իր աշխատանքներուն ժողովը քննարկեց կուսակցութեան ներքին կազմակերպչական հարցերը, որոնց նկատմամբ առաւ համապատասխան որոշումներ:

Քննարկուեցաւ Կուսակցութեան մամուլի զարգացման ու աւելի լայն հասարակութեան հասցնելու կարելիութիւնը ու այդ ուղղութեամբ առնուելիք քայլերը:

Պատգամաւորները բարձր գնահատեցին վերջերս Երեւանի մէջ կայացած ՍԴՅԿ 22-րդ Զամագումարի յաջող կայացումը ու արձանագրուած արդիւնքները:

Քննարկուեցան գաղութային տարբեր հարցեր, ինչպէս նաեւ Զայաստանի ու Արցախի ներկայ իրավիճակները: Ժողովականները դրական գնահատեցին ՍԴՅԿ դիրքորոշումը՝ Զայրեանի ժողովուրդին կողմէ ընտրուած իշխանութիւններուն հետ համագործակցութիւնը:

Ժողովի վերջին օրակարգով տեղի ունեցաւ նոր Վարիչ Մարմինի ընտրութիւնը՝ հետեւեալ կազմով.

- Վազգէն Խոտանեան ատենապետ
- Միհրան Խաչատուրեան փոխատենապետ
- Լեւոն Մանուկեան քարտուղար
- Վահէ Աջապահեան
- Կարինէ Տեփոյեան
- Ռուբէն Մուղալեան
- Յակոբ Աճէմեան
- Գրիգոր Մուրոյեան
- Յրի Ունել

## Ֆրանսայի Ծերակոյտը Ընդունեց Ատրպէյճանի Նկատմամբ Պատժամիջոցներ Առաջարկող Բանաձեւ

Նոյեմբեր 15-ին, Ֆրանսայի Հանրապետութեան Մերակոյտը ընդունեց Հայաստանին աջակցող եւ Ատրպէյճանի նկատմամբ պատժամիջոցներ առաջարկող բանաձեւ: Ֆրանսայի Մերակոյտի բանաձեւը կը պահանջէ հեռացնել Ատրպէյճանի զինուած ուժերը Հայաստանի ինքնիշխան տարածքէն եւ յարգել Հայաստանի տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը.

Բանաձեւը կոչ կ'ընէ ազատ արձակել բոլոր հայ ռազմագերիները եւ ապահովել անոնց վերադարձը հայրենիք:

Կ'առաջարկէ Ֆրանսայի կառավարութեան, Եւրոպական գործընկերներու հետ համագործակցաբար, պատասխան դիւանագիտական եւ տնտեսական միջոցներ նախատեսել Ատրպէյճանի կողմէ իրականացուած թշնամանքը պատժելու նպատակով, այդ շարքին՝ կիրառել պատժամիջոցներ, որոնք կը թիրախաւորեն Ատրպէյճանի իշխանութիւններու ունեցուածքը, ինչպէս նաեւ կը նախատեսեն նաւարգել (embargo) կիրառել Ատրպէյճանէն կազմի եւ նաւթի ներկրման հարցով:

Շար.ը էջ 5

Շար.ը էջ 6

**ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**Արցախը Բանակցութիւններից Դուրս Թողած Ռոբերտ Քոչարեանի Գրասենեակի Զանակարգողը Կամ Բանից Անտեղեակ Է, Կամ՝ Ստախոս**

**ՅԵՂԻՆԵ ՍԱՆՈՒԿԵԱՆ**

Հ1-ին տուած հարցազրույցում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը «աղէտալի սխալ» էր որակել 1998 թ.-ին Արցախը բանակցային գործընթացից դուրս թողնելը: «Դա աղէտալի սխալ էր, որի հետեւանքները մինչ օրս կրում ենք: Արցախը պէտք է լինի միակ խօսողը ԼՂ խնդրի կարգաւորման եւ ԼՂ հայութեան իրաւունքների պաշտպանութեան վերաբերեալ: Այո, ես շարունակում եմ մտածել այդպէս, որ, այո՛, ԼՂ ներկայացուցիչները պէտք է լինեն խօսակցութեան կողմ. սա ԼՂ մեր հայրենակիցների իրաւունքները պաշտպանելու լաւագոյն ձեւն է: Այո, մենք կարծում ենք, որ ԼՂ-ի եւ Ատրպէյճանի միջեւ պէտք է տեղի ունենայ երկխօսութիւն: Աւելին ասեմ՝ եթէ 1998-ին ԼՂ-ն բանակցային գործընթացից դուրս թողնուած չլինէր, ԼՂ հարցը վաղուց կարգաւորուել էր», - մասնաւորապէս յայտարարել էր երկրի ղեկավարը:

Արցախը բանակցային գործընթացից դուրս թողնելուն, ի դէպ, Փաշինեանը քանիցս է անդրադարձել: Եւ ի դէպ, սա այն գլխաւոր թեման է, որի շուրջ ՀՀ առաջին եւ երկրորդ նախագահների միջեւ երկար տարիներ կոշտ բանավէճ է ծաւալուել, առաջին նախագահը փաստերի վկայակոչմամբ ապացուցել է, որ Արցախը՝ որպէս բանակցային կողմ, դուրս է թողնուել իր յաջորդի՝ Քոչարեանի օրօք, վերջինս էլ փորձում է ապացուցել, որ Արցախը դադարել է բանակցային կողմ լինել հենց Տէր-Պետրոսեանի օրօք:

Ինչպէս եւ սպասուում էր՝ Փաշինեանի վերջին հարցազրույցում հնչած վերոյիշեալ դիտարկմանը արձագանքել է երկրորդ նախագահը՝ ի դէմս իր գրասենեակի համակարգող Բագրատ Միկոյեանի: Վերջինս Փաշինեանին մեղադրել է ստախոսութեան մէջ՝ յայտնի կենդանու համառութեամբ վերստին պնդելով, թէ «Արցախը բանակցային գործընթացից»:

նակցութիւններից դուրս է թողնուել նրա քաղաքական հօր կառավարման ժամանակահատուածում՝ 1996-1997 թթ, «ինչի մասին կան բազմաթիւ փաստական հրապարակումներ եւ գործող անձանց ինքնախոստովանական ելույթներ (դրանք բազմիցս հրապարակուել են)»: Թէ ինչ «փաստական հրապարակումների» եւ «գործող անձանց ինքնախոստովանական ելույթների» մասին է խօսում Միկոյեանը՝ յայտնի չէ, քանի որ վերջինս գէթ մէկ այդպիսի ելույթ կամ հրապարակում չի մէջբերում կամ վկայակոչում՝ բաւարարուելով մերկապարանոց ճառասացութեամբ: Մինչդեռ, ինչպէս ինքն է ձեւակերպում՝ Փաշինեանի «քաղաքական հօր» եւ բազմաթիւ այլ «գործող անձանց» կողմից ապացուցուել է, որ ԼՂ-ի՝ հակամարտութեան կողմի մանդատը իւրացնողը, կարգաւորման գործընթացից դուրս մղողը եղել է հենց Քոչարեանը: Նշենք, որ երբ 2018 թ.-ին կառավարութեան ծրագիրը ներկայացնելիս դարաբաղեան կարգաւորման հարցի առիթով արձանագրեց, թէ «Այն, որ Արցախը հակամարտութեան լիարժէք կողմ է, հաստատուել է 1994 թ.-ի ԵԱՀԿ Բուդապէշտի գագաթնաժողովի շրջանակներում, եւ մինչեւ 1998 թուականը բանակցային գործընթացը տեղի է ունեցել հենց այս ձեւաչափով», Քոչարեանի գրասենեակը շտապեց փրփրաբերան մի յայտարարութիւն տարածել՝ փորձելով ապացուցել հակառակը, այն, ինչ եւս մէկ անգամ փորձել է Միկոյեանը: Այդ ժամանակ ի պատասխան Քոչարեանի գրասենեակի գալարումների, «lur.am» կայքում հրապարակուեց մի համապարփակ յօդուած, որում արձանագրուած են թեմայի վերաբերեալ «ամենատեղեակ մարդկանց վկայութիւններն ու գնահատականները»:

Մէջբերենք դրանցից մի քանիսը՝ սկսելով ամենաքաջատեղեակից: ԵԱՀԿ Միսկի խմբի Ֆրանսասի համանախագահ Բեռնար Ֆասի-

են 2008 թ.ին յայտարարեց. «ԼՂ-ի հեռացումը բանակցութիւններից չի եղել համանախագահների որոշումը: Նախքան Ռոբերտ Քոչարեանի՝ ՀՀ նախագահ դառնալը, Ղարաբաղը բանակցային կողմերից մէկն էր, սակայն նրա՝ ՀՀ նախագահ ընտրուելուց յետոյ որոշում ընդունուեց այն մասին, որ ՀՀ-ն աւելի լաւ կը ներկայացնի Ղարաբաղի դիրքորոշումները»:

2010թ. Մարտին Ֆրանսասի համանախագահը հանդէս եկաւ մէկ այլ պաշտօնական յայտարարութեամբ. «Քոչարեանն է ցանկացել, որպէսզի բանակցութիւններում ինքը ներկայացնի եւ՝ Հայաստանը, եւ՝ Ղարաբաղը»:

Մէկ այլ գործող անձի՝ ԼՂՀ նախագահ Արկարի Ղուկասեանի «ինքնախոստովանական վկայութեանը» ծանօթանալը եւս օգտակար կը լինի Միկոյեանի եւ նրա պատրոնի համար: Ըստ այդմ. «1992թ. սկսած՝ ընթանում էր ակտիւ բանակցային գործընթաց ԵԱՀԿ-ի (այժմեան ԵԱՀԿ-ն-խմբ.) շրջանակներում: ԼՂ-ն մասնակցում էր բոլոր բանակցութիւններին: 1998թ. բանակցային գործընթացը գործնականում դադարեցուեց: Այսօր վարում է մաքրային դիւանագիտութիւն. ԵԱՀԿ Միսի համանախագահները ժամանում են տարածաշրջան, խորհրդակցում հակամարտող կողմերի հետ, սակայն գործընթացը, որպէս այդպիսին, բացակայում է: Այդ գործընթացի շրջանակից դուրս հանդիպում են Հայաստանի եւ Ատրպէյճանի ներկայացուցիչները»: Ահա եւս մէկ վկայութիւն՝ Կարէն Միրզոյեանի՝ ԼՂՀ ԱԳ նախարար, 2014 թ. «Յիրուաւի, Արցախը եղել է բանակցային գործընթացի լիարժէք մասնակից մինչեւ 1998 թուականը: Յետագայում, կապուած գործընթացի դինամիկայի հետ, կապուած այն փաստաթղթերի փոփոխութեան հետ, որոնք այդ պահին բանակցային սեղանին էին, եւ ամէնից առաջ՝ Ատրպէյճանի դիրքորոշման հետեւանքով, Արցախը դուրս մղուեց

բանակցային գործընթացից»:

Գէորգի Պետրոսեան՝ ԼՂՀ ԱԳ նախարար, 2009 թ. «Ղարաբաղեան կողմը ամբողջութեամբ անտեսուած է բանակցային գործընթացում, այնինչ մինչեւ 1998 թուականը միջնորդների բոլոր առաջարկներն ուղարկուած էին Հայաստան, Ատրպէյճան եւ Ղարաբաղ, եւ բանակցութիւններն ունէին եռակողմ ձեւաչափ»:

Եւ վերջապէս, թեմային քանիցս անդրադարձել է նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանը: Մասնաւորապէս 2009 թ. Սեպտեմբերի 18-ի հանրահաւաքում առաջին նախագահը յայտարարեց. «Ի՞նչ պատճառով է ԼՂ կարգաւորման գործընթացը հասել այսօրուայ անմխիթար վիճակին: Առաջին եւ գլխաւոր պատճառը, անշուշտ, Ղարաբաղի՝ որպէս հակամարտութեան կողմի դուրսմղումն է այդ գործընթացից:

...Մինչեւ 1998 թուականը ԵԱՀԿ Միսկի խմբի համանախագահները իրենց մշակած գրաւոր առաջարկները, Հայաստանից ու Ատրպէյճանից բացի, ներկայացրել են նաեւ Ղարաբաղին, ինչը նշանակում է, որ վերջինիս համաձայնութիւնը պարտադիր էր կարգաւորման որեւէ տարբերակի իրագործման համար: Այլ կերպ ասած, ԼՂ կարգաւորման գործընթացում Հայաստանը, Ատրպէյճանը եւ ԼՂ-ն լիովին իրաւահաւասար սուբեկտներ էին՝ օժտուած վետոյի

Շար.ը էջ 15

**Ատրպէյճանը Կեղծում Է, Զայաստանը՝ Զերքում, Ինչ Ունի Ասելու ԵՄ Դիտորդական Առաքելութիւնը**

**ՅԱԿՈՔ ԲԱՐԱՆԵԱՆ**

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հերքել է Ատրպէյճանի տարածած տեղեկութիւնը, թէ Նոյեմբերի 13-ի գիշերը հայկական զինուժի ստորաբաժանումները կրակել են ատրպէյճանական դիրքերի ուղղութեամբ: Ատրպէյճանը վերջին օրերին հերթական անգամ տարածում է այդօրինակ կեղծ տեղեկութիւն: Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հերքում է հերթական անգամ: Հայաստան-Ատրպէյճան սահմանի մշտադիտարկման եւրամիութեան խումբը՝ լուռ է: Խումբը աշխատում է արդէն քանի օր: Նոյեմբերի 13-ին Ատրպէյճանի նախագահ Ալիեւի հետ հեռախօսազրույց ունեցած Ֆրանսայի նախագահ Մակրոնը նշել էր ԵՄ դիտորդական առաքելութեան աշխատանքի կարեւորութիւնը՝ կայունութեան ապահովման հարցում: Այդ խմբի շուրջ համաձայնութիւնը կայացուել էր Պրահայի քառակողմ

հանդիպմանը, թէեւ այն համաձայնութիւն էր աւելի շատ Հայաստանի ու ԵՄ միջեւ, իսկ Պաքուն ընդամենը տուել է հարկ եղած, իրեն առնչուող հարցերում այդ առաքելութեան հետ աշխատելու համաձայնութիւն: Չնայած պահպանող յարաբերական կայունութեանը, փորձը ցոյց է տուել, որ ատրպէյճանական ապատեղեկատուութիւնները՝ թէ հայկական կողմը խախտել է հրադադարը, դառնում են ատրպէյճանական պատրաստուող ագրեսիայի «նախաբան»:

Յամենայն դէպս այն, որ Ատրպէյճանը մի կողմից ինքն է պարբերաբար խախտում հրադադարը, ինչի վերաբերեալ Հայաստանի ՊՆ-ն տարածում է հաղորդագրութիւններ, միւս կողմից փորձում է հայկական կողմին կեղծ մեղադրանք ներկայացնել իբրեւ թէ հրադադարի խախտումների համար, ունի բաւականին զգօն վերաբերմունքի կարիք: Այդ առնչութեամբ շատ կարեւոր է, որպէսզի Եւրամիութեան դիտորդական առաքե-

լութիւնը զբաղուի ոչ միայն լուռ փաստահաւաքութեամբ, այլ թերեւս որոշակի պարբերակականութեամբ փաստազրական ամփոփումներով, ներկայացնելով որոշակի սահմանափակ ժամանակահատուածի դիտորդական արձանագրումների ամփոփագիրը:

Անկասկած է, որ դիտորդական առաքելութեան մեխանիզմը ունի կենսունակութեան բարձրացմանն ուղղուած լրամշակումների անհրաժեշտութիւն, այլապէս, առկայ իրավիճակից է կախուած այդ մեխանիզմը, քան իրավիճակը՝ մեխանիզմի գործունէութիւնից: Հաշուի առնելով Պաքուի գործողութիւնների մեթոդաբանութեան եւ տրամաբանութեան նախադէպերը, լուռութիւնը թերեւս արդիւնաւէտ վարքագիծ չէ, որ պէտք է դրսեւորի ԵՄ առաքելութիւնը, հաշուի առնելով նաեւ այն, որ Ատրպէյճանն իհարկէ իր մոտիվներում դիտարկելու է նաեւ այդ առաքելութեանը հեղինակագրկելու նպատակը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

Պարտադիր Զինուորական Ծառայութեան Վեց Ամիսը Լրանալէ Ետք, Զինուորը Պայմանագրային Ծառայութեան Անցնելու Հնարաւորութիւն Պիտի Ունենայ. Պապիկեան

Նախագիծով կ'առաջարկուի կառավարութեան 2021-2026 թուականներու ծրագրին համապատասխան՝ բարձրացնել պայմանագրային զինուորական ծառայութիւն անցնելու գրաւչութիւնն ու հասարակական ծառայութեան արհեստավարժ պայմանագրային զինուորական ծառայութեան զարգացման համար. ըսած է ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի Նոյեմբեր 14-ի նիստին «Ձինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրէնքի նախագիծի քննարկման ժամանակ:



ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան

Գործընթացը պիտի կարգաւորուի կառավարութեան որոշմամբ, ոչ թէ ՀՀ պաշտպանութեան նախարարին հրամանով:

«Պաշտպան Հայրենեաց» ծրագրով պիտի դադարեցուի «Ես եմ» ծրագրի գործունէութիւնը: «Ես եմ» ծրագրով այս պահին զինուորական ծառայութիւնը կը շարունակէ երկու զինուոր: Անոնց ծառայութեան 36-ամսեայ ժամկէտը կ'աւարտի 2023 թուականի Յունուարին:

Սուրէն Պապիկեանը նաեւ տեղեկացուցած է, որ մօտ ապագային պիտի ներկայացուին ոլորտի բարեփոխման նոր օրէնսդրական նախաձեռնութիւններ: «Բարեփոխումների հիմքը եւ նպատակը պայմանագրային զինծառայութիւնն է», փաստած է ՀՀ պաշտպանութեան նախարարը:

Ըստ յանձնաժողովի փոխնախագահ Արմէն Խաչատրեանի՝ ներկայացուած է աննախադէպ օրէնքի նախագիծ: Ան վստահութիւն չառնում է, որ արդիւնքները պիտի ըլլան արագ եւ կանխատեսելի: «Օրինագիծը կ'ապուած է մեր պաշտպանութեան բարձրացման հետ», ըսած է ան: Արմէն Խաչատրեանը նաեւ կարեւորած է բնագաւառին մէջ վերջին ամիսներուն իրականացուած միւս բարեփոխումները:

Նախարարին հաւաստմամբ պիտի ներդրուին նախարարութեան կողմէ նշուած ծառայութեան վաչրին մէջ եւ պայմաններով շարքային կազմի պարտադիր զինուորական ծառայութեան փոխարէն շարքային եւ սպայական կազմերու պարտադիր զինուորական ծառայութեան պայմանագրային զինուորական ծառայութեան անցման նոր համակարգ եւ շարքային կազմի կարճաժամկէտ պարտադիր զինուորական ծառայութեան ընթացակարգ:

«Պաշտպան Հայրենեաց» ծրագիրը նախատեսում է շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինուորական ծառայութեան առաջին վեց ամիսը լրանալուց չեղարկուած կարգով պայմանագրային զինուորական ծառայութեան անցնելու հնարաւորութիւն՝ ծառայութեան ժամկէտը սահմանելով 5 տարի, ինչպէս նաեւ պայմանագրի ժամկէտը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչուելու հիմքով ծառայութիւնից ժամկէտից շուտ արձակուելիս՝ նրանց համար սահմանելով պատուովճար ստանալու իրաւունք: Պատուովճարի չափը նախատեսուած է սահմանել 5 միլիոն դրամ, որը տնօրինուելու է ազատօրէն», ըսած է Սուրէն Պապիկեանը:

Արցախի Մէջ Միակարծիք Չեն Բանակը Ինքնապաշտպանութեան Ստորաբաժանումներով Փոխարինելու Հարցին Մէջ

Արցախի մէջ պատրաստ են հրաժարելու Պաշտպանութեան բանակին ու գայն փոխարինելու ինքնապաշտպանութեան ստորաբաժանմամբ՝ պայմանով, որ ռուս խաղաղապահներուն թիւը աւելնայ, իսկ առաքելութիւնը տեղակալուի շփման գիծի ամբողջ երկայնքով, «Ազատութեան» փոխանցեց Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի իշխող խմբակցութեան ղեկավար Արթուր Յարութիւնեանը:

Այս հարցին մասին առաջինը հրապարակաւ վարչապետ Փաշինեանը խօսեցաւ՝ կառավարութեան նիստին՝ տեղեկացնելով, որ տասը օր առաջ Սոչիի մէջ Ռուսիոյ եւ Ատրպէյճանի ղեկավարներուն ներ-

կայացուցած է Ղարաբաղի իշխանութիւններուն առաջարկը, որ եթէ Արցախի շուրջը ստեղծուի ապառազմականացուած գոտի՝ միջազգային երաշխիքներով, ապա նման մասշտաբի Պաշտպանութեան բանակ ունենալու կարիք Ղարաբաղը կրնայ չունենալ: Փաշինեան չըսաւ, եթէ Ալիեւն ու Փութինը ընդունած են իր առաջարկը, միայն նշեց, որ Արցախի իշխանութիւններուն այդ առաջարկը, կը մնայ ուժի մէջ: Ղարաբաղի խորհրդարանի իշխող «Ազատ Հայրենիք» ՖՄԴ» խմբակցութեան ղեկավար Արթուր Յարութիւնեան հաստատեց, որ պատրաստ են փաշինեանի ներկայացուցած տարբերակին՝ եթէ կա-

Մեր Համակիրները Մեզի Մանտաք Տուած Են, Որ Շարունակենք Գործունէութիւնը Աժ-ի Մէջ. Սեյրան Օհանեան

ՀՀ Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Մէլքի Օհանեանը կը համարէ, որ ընդդիմադիրները փողոցային պայքարի ընթացքին շատ կարեւոր գործ կատարած են, օրինակ՝ յառաջ երբեք են իրենց համակիրներուն, ժողովուրդի պայքարի ոգին, միջազգային հանրութեան ցոյց տուած են, որ հայ ժողովուրդը ի վիճակի է շարունակելու պայքարիլ Հայաստանի ինքնութեան համար, իսկ հիմա համակիրները իրենց մանտաք տուած են, որ գործունէութիւնը շարունակեն Աժ-ի մէջ: Օհանեան այս մասին ըսաւ Աժ-ի մէջ լրագրողներու հետ ճեպագրոյցին՝ անդրադառնալով պոչթոթէ չեռոյ ընդդիմութեան վերադարձին խորհրդարան:



Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Սեյրան Օհանեան

«Մենք փողոցում, կարծում եմ, որ մէկ շատ կարեւոր գործ արեցին՝ յառաջացուցինք մեր համակիրները եւ մեր ժողովուրդի պայքարի ոգին, երկրորդը՝ միջազգային հանրութեան ցոյց տուեցինք, որ հայ ժողովուրդն ի վիճակի է շարունակելու պայքարելու Հայաստանի ինքնութեան համար: Եւ երրորդը՝ եթէ ժամանակավիճակն էր փաստաթղթեր պէտք է ստորագրուէին, մենք կանխարգելեցինք: Հիմա փողոցային գործընթացներն աւարտուել են, եւ մեր համակիրները մեզ մանտաք են տուել, որ մենք շարունակենք մեր գործունէութիւնն Աժ-ում: Դրա համար մենք Աժ-ում շարունակելու ենք աշխատել այն օրակարգով, որը մեզ անհրաժեշտ է», ըսաւ Օհանեան:

գուցէ մտավախութիւն ունեցած են բացակայութիւններու պատճառով մանտաքին գրկուելու եւ անոր համար կը վերադառնան խորհրդարան՝ խմբակցութեան ղեկավարը ըսաւ. «Այդ մանտաքները մեզ տուել են մեր զաղափարակիցները՝ ՀՀ շուրջ 300 հազար քաղաքացիներ, եւ մենք պարտաւոր ենք այդ մանտաքը կրելու եւ ժողովուրդի կարծիքը, տեսակէտներն արտայայտել նաեւ Աժ-ում: Մեզ մօտ ոչ մի պատգամաւորի, այդ թւում ինձ համար մանտաքի, պատգամաւորական անձեռնմխելիութեան հետ կապուած ոչ մի մտավախութիւն չկայ»:

Ան կը կարծէ, որ եթէ իրենք պատգամաւոր են, ապա պէտք է այդ մանտաքները ամբողջութեամբ կիրառեն ժողովուրդին տեսակէտը արտայայտելու համար:

Պետական Դաւաճանութեան Մեղադրանքով Զինուոր Մը Ձերբակալուած Է

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) կը յայտնէ պետական դաւաճանութեան հերթական ղեկավար բացառապետ մասին, եռամսեայ հաւաքներուն մասնակցած զինուորը ձերբակալուած է: Ըստ ԱԱԾ-ի՝ 2021-ի Օգոստոս-Նոյեմբեր ամիսներուն Պաշտպանութեան Նախարարութեան եռամսեայ հաւաքներուն մասնակցած զինուոր, շարքային է.Ա-ն, կարճ ժամանակով առնչուելով պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկութիւններու հետ, 2021-ի Հոկտեմբերին Ֆէյսպուքի միջոցով ծանօթացած է

օտարերկրեայ յատուկ ծառայութեան աշխատակից հանդիսացող անձի հետ, Ուսթափի միջոցով հաւաքած եւ անոր յանձնած է իրեն վստահուած դիրքին, անոր ճշգրիտ տեղակայման, դիրքապահ անձնակազմի քանակին, սպառազինութեան, անոնց մէջ ծառայութեան կայացման կարգին վերաբերելու պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկութիւններ, որոնց դիմաց ստացած է իր իր գրուցակիցին մերկ լուսանկարները: Նախաքննութիւնը կը շարունակուի, ըսուած է հաղորդագրութեան մէջ:

տարուի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան 3-րդ կէտը, համաձայն որուն՝ Ղարաբաղի մէջ խաղաղապահ գորակազմ պէտք է տեղակայուի շփման գիծի ամբողջ երկայնքով:

իրաւունք ունենալու», ըսաւ Յարութիւնեան:

«Հիմա ամբողջութեամբ շփման գծով Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ ուժերը, հաշուի առնելով քանակը եւ մնացած բոլոր տեխնիկական հարաւորութիւնները, չեն կարող տեղադրուել: Եթէ այդ կէտը կատարուի եւ ամբողջ շփման գծով տեղադրուեն Ռուսաստանի խաղաղապահ ուժերը, կարծում ենք, որ եթէ այդ կէտը ամբողջութեամբ կատարուի, էդ ղեկավարմ մենք միայն ունենալու ենք ինքնապաշտպանութեան ստորաբաժանումներ, որը մենք ՄԱԿ-ի կանոնադրութեամբ

Արցախի ընդդիմութիւնը, մինչդեռ, դէմ է Պաշտպանական բանակի լուծարման: Խորհրդարանի «Արդարութիւն» խմբակցութեան ղեկավար Դաւիթ Գալստեան կ'ըսէ, որ թոյլ պիտի չտան, քանի որ այդ պիտի նշանակէ նոր ցեղապանութիւն. «Ես չգիտեմ Ղարաբաղի իշխանութիւնները ինչ են փոխանցել Նիկոլ Փաշինեանին, բայց ես եւ մեր կուսակցութիւնը, իմ համախոհները հետ միասին, պայքարելու ենք նման որոշման դէմ եւ թոյլ չենք տալու որեւէ անձի կամ անձանց Ղարաբաղում Պաշտպանութեան բանակի աշխատանքը չհղաքացնել, լուծարել Պաշտպանութեան բանակը: Դա լինելու է հերթական ցեղապանութեան սկիզբը»:

# ԼՈՒՐԵՐ

## Փաշինեան Կարելորած Է ԵՄ-ի Կողմէ Զայաստանի Զամար Յայտարարուած 2,6 Միլիար Եւրոյի Տնտեսական Եւ Ներդրումային Փաթեթի Արդիւնաւէտ Իրականացումը



Վարչապետ Փաշինեան կ'ընդունի Արեւելեան Գործընկերութեան հարցերով յատուկ բանազնացներու պատուիրակութիւնը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ԵՄ եւ ԵՄ անդամ երկիրներու Արեւելեան Գործընկերութեան հարցերով յատուկ բանազնացներու պատուիրակութիւնը:

Վարչապետը ողջունած է պատուիրակութեան այցը Հայաստան եւ կարեւորած՝ ՀՀ-ԵՄ համագործակցութեան շարունակական զարգացումը: Նիկոլ Փաշինեան նշած է Արեւելեան Գործընկերութեան ծրագրի շրջանակին մէջ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան զարգացման, արդարադատութեան, տնտեսութեան եւ այլ ուղղութիւններով իրականացուող բարեփոխումներու փաստը եւ յաւելած, որ զանոնք յառաջ մղելու օրակարգը ՀՀ կառավարութեան առանցքային առաջնահերթութիւններէն մէկն է: Վարչապետը կարեւորած է նաեւ ԵՄ-ի կողմէ Հայաստանի համար յայտարարուած 2,6 միլիար Եւրոյի տնտեսական եւ ներդրումային փաթեթի արդիւնաւէտ իրականացումը:

Կարեւորուած է ՀՀ-ԵՄ համագործակցութեան ընդլայնումը

տնտեսութեան, առեւտուրի, ներդրումներու, ուժանիւթի եւ այլ ուղղութիւններով: Նիկոլ Փաշինեան յաւելած է, որ մեր երկիրը Աշխարհի տնտեսական ազատութեան ցուցակին մէջ 165 երկիրներու շարքին կը գրադեցնէ 11-րդ հորիզոնականը:

Վարչապետը գրուցակիցներուն ներկայացուցած է Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդիրին, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման վերաբերեալ հայկական կողմի դիրքորոշումն ու դիտարկումները: Կարեւորուած է Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան գործունէութիւնը եւ ընդգծուած է վերջինիս դերը կայունութեան եւ անվտանգութեան ամրապնդման գործին մէջ:

Միտքեր փոխանակուած Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման ու սահմանային անվտանգութեան, տարածաշրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներու, ինչպէս նաեւ հայ-թրքական երկխօսութեան շուրջ:

## Խաղաղութեան Պայմանագիրը Պէտք Է Ունենայ Միջազգային Երաշխիքներ. Ալէն Սիմոնեան

Հայաստանի իշխանութիւնները լուրջ կը վերաբերին խաղաղութեան պայմանագրին շուրջ բանակցութիւններուն եւ անոր վերաբերեալ իրենց պատկերացումները կը յայտնեն բոլոր կողմերուն: Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ ճեպագրուցին այս մասին ըսաւ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան՝ մեկնաբանելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնը այն մասին, որ խաղաղութեան պայմանագրին 12 ժամ յետոյ պատերազմ կ'ընդհատուի, եթէ չըլլան միջազգային երաշխիքներ:

«Իշխանութիւնը լուրջ է վերաբերուած, եւ իր պատկերացումներն է յայտնում խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ, նաեւ՝ այն բոլոր կողմերին, որոնք միջնորդ են հանդիսանում այդ խաղաղութեան պայմանագրի կնքման համար: Դրա համար է վարչապետ Նիկոլ Փաշինեանը ասել, որ պէտք է լինեն յստակ երաշխիքներ, որովհետեւ միայն թողութ ստորագրելով չի: Յուսանք, որ այդ պայմանագիրը լուրջ երաշխիքներ կ'ունենայ,



Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

որովհետեւ ուղղակի պայմանագիր ստորագրելը բաւարար պայման չէ», ըսաւ Սիմոնեան:

Ազգային ժողովի նախագահին խօսքով՝ այս տրամաբանութեամբ պէտք է յառաջ շարժիլ եւ կայուն խաղաղութիւն հաստատել տարածաշրջանին մէջ:

«Ինչպէս տեսնուած էք, ի հե-

## Զայաստանի Վարչապետն Ու Արտաքին Գործերու Նախարարը Ընդունած Են ԵԱՀԿ Մինսքի Խումբի Ռուս Զամանախազահը

Հայաստանը կը պաշտպանէ ռուսական կողմէ ընթացիկ տարուայի Օգոստոսին ներկայացուած առաջարկները, որոնք կրնան Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման հետագայ բանակցութիւններուն հիմք հանդիսանալ, յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան ԵԱՀԿ մէջ կայացած հանդիպումի ընթացքին Մինսքի Խումբի



Արարատ Միրզոյեանը եւ Իկոր Խովաեւ Երեւանի Փաշինեան ԵԱՀԿ մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Ռուս համաձայնագրի, հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման աջակցելու հարցերով Ռուսիոյ արտաքին գործերու նախարարի յատուկ ներկայացուցիչ Իկոր Խովաեւի հետ հանդիպման:

Փաշինեանն ու Խովաեւը քննարկած են Սոչիի մէջ Հոկտեմբեր 31-ին տեղի ունեցած Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպէյճանի առաջնորդներուն եռակողմ հանդիպման արդիւնքներուն, հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին ու Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդիրին հետ կապուած հարցեր:

Իկոր Խովաեւին հանդիպած է նաեւ Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ:

Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան փոխանցմամբ՝ անոնք եւս քննարկած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման, Լեւոնային Ղարաբաղի հիմ-

նահարցի հանգուցալուծման առնչուող վերջին զարգացումները, ինչպէս նաեւ անդրադարձած են Հոկտեմբեր 31-ին Սոչիի մէջ կայացած Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպէյճանի ղեկավարներու վերջին եռակողմ հանդիպման ու ընդունուած համատեղ յայտարարութեան:

Հայաստանի արտաքին գործերու նախարարը շեշտած է ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումէն զերծ մնալու կողմերուն յանձնառութեան կարեւորութիւնը՝ նշելով, որ «Ատրպէյճանը իր յարձակողական վարքագիծով եւ առաւելապաշտական նկրտումներով կը շարունակէ խոչընդոտել տարածաշրջանին մէջ կայուն ու երկարաժամկէտ խաղաղութեան հաստատման»:

Արարատ Միրզոյեանը եւ Իկոր Խովաեւը միտքեր փոխանակած են նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման գործընթացին, ինչպէս նաեւ տարածաշրջանի ճանապարհային ենթակառուցուածքներու ապաշրջափակման վերաբերեալ:

## Առանց ԼՂ Խնդրի Յստակացման Զնարաւոր Զէ Խաղաղութեան Պայմանագիր ԿՈՒՅԵՆ Գրիգորեան

Առանց Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման կամ գոնէ յստակացման, թէ ինչպէս այն պիտի լուծուի, հնարաւոր չէ խաղաղութեան պայմանագիր կնքել Ատրպէյճանի հետ. այս մասին կ'ըսէ Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը: Անոր խօսքով՝ հայկական կողմը աշխատած է Ատրպէյճանի ներկայացուցած հինգ սկզբունքներուն եւ անոնց ընդլայնուած տարբերակին վրայ, որուն հիման վրայ երկու երկիրներու արտաքին գործերու նախարարները Նոյեմբեր 7-ին հանդիպած են Ուաշինկթընի մէջ: Այժմ այդ բնագիծը, ըստ Գրիգորեանի, ունի շրջանակային համաձայնագրի տեսք, որ կրնայ համապարփակ լուծել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առկա խնդիրները: Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը կը կարծէ, թէ երթալով

ճուղի ընդդիմութեան յայտարարութիւններին, երկու տարի անց Հայաստանը բաւականին լաւ բանակցուած է, եւ կարելի է շատ երկար նշել միջազգային ասպարէզում մեր դիւանագիտութեան յաղթանակները: Նման ներգրաւուածութիւն



Զայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

աւելի կը յստակացուին խաղաղութեան գործընթացին շրջանակները:

ԱՄՆ-ի, Ֆրանսայի, Ռուսաստանի կողմից նոյնիսկ չի եղել ԵԱՀԿ Մինսքի խմբի ձեւաչափի ժամանակ: Արդեօ՞ք սա յաղթանակ չէ: Իմ կարծիքով, դիւանագիտական առումով շատ մեծ յաղթանակ է», ըսաւ Սիմոնեան:

### Հայաստանի 6 Ընկերութիւններու Արտադրանքը Պիտի Վաճառուի Ամերիկեան Խանութներու Մէջ



Հայաստանի 6 տնտեսվարող-ներու արտադրանքը պիտի վաճառուի ամերիկեան մեծագոյն TJ Maxx եւ HomeGoods խանութներուն մէջ: Այս մասին յայտնած է «Buy Armenian» համահիմնադիր Նշան Օտապաշեանը՝ խօսելով Դեկտեմբեր 10-ին եւ 11-ին Կլենտէյլի Սիւրիք Առևտրի թրոփումին մէջ կայանալիք աննախադէպ «Ամանորի Սպասումով» տոնավաճառի մասին:

Նշան Օտապաշեանը պատմած է, որ «Buy Armenian»-ի ջանքերով սկսած է համագործակցութիւն հայ արտադրողներու եւ ամերիկեան այս երկու խանութներուն միջեւ, իսկ յաջողութիւն արձանագրելու պարագային այդ համագործակցութիւնը շարունակական պիտի ըլլայ:

Նշան Օտապաշեանը մանրամասնած է. «Մեզի հարցուցին, թէ ի՞նչ ապրանքներ կարելի է ներկայացնել ոչ-հայ յաճախորդներուն ու մենք պատրաստեցինք որակեալ ու զեղեցիկ արտադրանքի հայ արտադրողներու ցուցակ ամերիկեան երկու խանութներու՝ TJ Maxx եւ HomeGoods-ի համար: Ներկայացուցինք եւ արդէն իրենք առանձնացուցին այն ապրանքները, որոնք հետաքրքրական էր իրենց, այնուհետեւ մօտ 1 ամիս առաջ 10 թոն ապրանքի պատուէր տուին Հայաստանէն 6 փոքր ընկերութիւններու: Յատկանշական է, որ այս ապրանքները պիտի վաճառուին ոչ միայն Գալիֆորնիա նահանգին, այլ 7 տարբեր նահանգներ մէջ՝ Գալիֆորնիոյ, Արիզոնայի, Օհայոյի, Ինտիանայի, Ճորճիայի, Նիւ Ճորճիի եւ Գոննէթիքութիւնի մէջ: Պիտի վաճառուի մեղր, թէյ, խնձորի քացախ, մեղրի քացախ, տարբեր տեսակի չիրեր: Այս ամէնը պէտք է բաժնուի այս 7 նահանգներուն միջեւ, եւ եթէ այս ապրանք-

ները շուտ վաճառուին, ապա ամէն ամիս այս քանակով կամ աւելի պատուէրներ պիտի ստացուին: Սա իսկապէս մեծ ձեռքբերում է»:

Վերջինս նաեւ կոչ ըրած է ԱՄՆ-ի մէջ բնակող բոլոր հայրենակիցներուն գտնելու այս ապրանքները եւ գնելու գանձք, քանի որ այդպիսով զարգացման մեծ հնարաւորութիւն կը ստեղծուի Հայաստանի մէջ գործող այս տնտեսվարողներու, ինչպէս նաեւ՝ Հայաստանի տնտեսութեան համար:

«Ամանորի Սպասումով» տոնավաճառը եւս մեծապէս պիտի նպաստէ հայ արտադրողներու նոր շուկայ մտնելուն ու տնտեսութեան աճին: Արդէն յայտնի է, որ շուրջ 10 արտադրողներ Հայաստանէն ներկայ պիտի գտնուին Դեկտեմբեր 10-ին եւ 11-ին Կլենտէյլի Սիւրիք Առևտրի թրոփումի մէջ կայանալիք ցուցահանդէս վաճառքին, որուն կազմակերպիչներն են «Buy Armenian» ընկերութիւնը եւ «Standing Our Families» հիմնադրամը: Հալայ, Արցախի կարպետ, Կեռաս, Մանթալ, Անտառամ թէյեր, Միսմա, Արարատ պոքս, Սուսօ միրգեր, Չրենի, Armenia Cheer & chocolates ընկերութիւններու ներկայացուցիչները ամենայն հաւանականութեամբ ներկայ պիտի գտնուին այս ջերմ հայկական միջոցառման եւ պիտի շփուին ամերիկաբնակ մեր հայրենակիցներուն հետ:

Յուշահանդէս վաճառքին մասնակցելու համար տարաւար վարձակալելու հնարաւորութիւն պիտի ունենան ընդամենը 80 ընկերութիւն: Այսպիսով, «Ամանորի Սպասումով» տոնավաճառի տաղաւարներու ամրագրման համար անհրաժեշտ է գանգահարել 866 207 1466 հեռախօսահամարին կամ գրել info@buyarmenian.com ելեկտրոնային հասցէին:

### Հնդկական Bharat Forge-ը Հայաստանի Պիտի Վաճառ 155 մմ Տրամաչափի Հրետանի՝ 155 Միլիոն Տոլարով

Տեղական գէնքի համակարգերու արտահանման մէջ աննախադէպ յառաջընթաց արձանագրելով՝ Bharat Forge-ը յայտարարած է, որ Kalyani Strategic Systems-ին պատկանող դուստր ձեռնարկութիւնը «արտահանման պատուէր ստացած է 155 միլիմետր (մմ) հրետանային միջոցներու համար»:

2022 թուականի Նոյեմբեր 9-ին Bharat Forge Limited ընկերութիւնը, որ կը գտնուի Փունայի մէջ, յայտարարած է, որ ստացած է 155 միլիոն տոլարի արտահանման պատուէր իր 155 մմ հրետա-

նային միջոցներէն մէկուն համար: Զէնքի մատակարարումը պէտք է իրականացուի երեք տարուան ընթացքին: Ընկերութիւնը Պոմպէյի ֆոնտային պորսային տեղեկացուցած է գէնքի վաճառքի մասին եւ չնայած չէ նշած երկիրը, որ պատուիրած է գէնքը, այնուամենայնիւ յայտարարած է, որ այդ ոչ հակամարտային գօտի է, ինչ որ կը նշանակէ, որ երկիրը ներկայիս ներգրաւուած չէ որեւէ պատերազմի մէջ:

Այս մասին կը տեղեկացնէ հնդկական մամուլը, տեղեկատուութիւնը, որ, սակայն, ճշդուած չէ:

### 1998-ին Տեղի Է Ունեցել Աղետալի Սխալ

Շարունակուած էջ 1-էն

միջեւ պէտք է տեղի ունենայ երկխօսութիւն: Աւելին ասեմ՝ եթէ 1998-ին ԼՂ-ն բանակցային գործընթացից դուրս թողնուած չլինէր, ԼՂ հարցը վաղուց կարգաւորուել էր»:

Վարչապետի համոզմամբ՝ ԼՂ հայրենակիցներու յաջողութեան գրաւականը այնտեղ ապրելն է, այնտեղ աշխատելն ու արարելը. «Եւ ՀՀ-ն բոլոր հնարաւոր պայմանները ստեղծում է դրա համար. ԼՂ բիւժէն իր ողջ պատմութեան մէջ երբեք չի եղել այնքան, որքան այսօր է»:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը պատասխանելով հարցին, թէ այսօր ո՞րն է Հայաստանի իշխանութեան դիրքորոշումը Արցախի հարցով. Արցախը Հայաստան է եւ վերջ, թէ՞ Հայաստանը ընդունած է, որ Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ է, ըսած է. «Եթէ մենք ուզում ենք աղէտների առաջ չկանգնեցնել Հայաստանի Հանրապետութիւնը եւ Լեռնային Ղարաբաղը, մենք այդ վետոյով պէտք է ամբողջ աշխարհի դէմ միայնակ կռիւ չտանք, որովհետեւ չենք կարող տալ»: Վարչապետը նաեւ աւելցուց, որ պէտք է իրագործելի ծրագիր ունենալ, թէ ինչպէս պիտի լուծենք խնդիրը: Անոր համոզմամբ՝ նոր իրավիճակին մէջ Հայաստանի Հանրապետութիւնը նոր տեսութեան անհրաժեշտութիւն ունի:

«Ոչ թէ նրա համար, որ հին տեսութիւնը վատն է, այլ որ այդ տեսութեան ընդունման առաջին իսկ օրից մեր բոլոր գործողութիւնները հակասել են այդ տեսութեանը եւ, ի վերջոյ, բերել, հասցրել են նրան, որ այդ տեսութիւնը գործնականում չեղարկուել է առաջին հերթին մեր կողմից», ըսաւ վարչապետը:

Փաշինեան այսօր ինքն իրեն ամենաշատը մեղաւոր կը զգայ, որ 2018 թուականին չէ ըսած ամէն ինչ այնպէս, ինչպէս կ'ըսէ հիմա: «Համարել եմ, որ որպէս մոհիկան պէտք է պայքարեմ յանուն այդ նարատիւի: Յետոյ պարզուել է, որ դա ոչ մէկին պէտք չի եւ ոչ մէկը պատրաստ չի եւ պատրաստ չի եղել այդ նարատիւին, այդ տեսութիւնը արձանագրելուն եւ դա փրկելուն ուղղուած որեւէ գործողութիւն անելուն, երբ իշխանական լծակներ է ունեցել: Մենք պէտք է արձանագրենք, որ դա տեղի է ունեցել, պէտք է առերեսուենք այս իրականութեան հետ», - ըսաւ ան աւելցնելով, որ 30 տարի մենք այնպէս վարուած ենք, կարծես ՄԱԿ-ի Անբանաձեւերը չկան, բայց կան անոնք եւ եղած են միշտ:

«Մենք այսօր փորձում ենք գէնքի եւ սպառազինութեան ձեռք բերման մեր հնարաւորութիւնները դիւրեւսփիկացնել եւ այդ ուղղութեամբ գնալու ենք առաջ: Եթէ որեւէ արդիւնքի մասին յայտարարելու անհրաժեշտութիւն կը լինի դրա մասին կը յայտարարենք», - Հանրային հեռուստաընկերութեան եթերում ըսաւ Նիկոլ Փաշինեանը՝ խօսելով Հնդկաստանէն գէնքի գնման հրապարակումներու մասին:

Անդրադառնալով իր այն յայտարարութեան, որ Հայաստանի կողմէ գումար փոխանցուած գոր-

ծընկեր երկիրներէն մէկը, գէնքը չէ մատակարարած, ինչպէս նաեւ գումարը ետ չէ վերադարձուցած, վարչապետը ընդգծեց, որ խնդրի մասին քննարկումները կը շարունակուին. «Ցաւօք, մինչ օրս խնդիրը չի լուծուել, ընթացքի մէջ է»:

Դուք դեռ իրագործելի կը համարէ՞ք ձեր այն ցանկութիւնը, որ մինչեւ տարեվերջ խաղաղութեան պայմանագիրը պէտք է ստորագրուի: Պատասխանելով յիշեալ հարցին, ՀՀ վարչապետը մասնաւորապէս յայտարարեց.

«Մենք, յամենայնդէպս, ամէն ինչ դրա համար կ'անենք: Շատ կարեւոր է այդ խնդրի գործնական լուծման համար, որ մենք գլխաւորապէս խօսակցութիւնից անցում կատարենք բուն տեքստային, բովանդակային խօսակցութեանը: Յայտարարութեան 9-րդ կէտի հետ կապուած, կարծում եմ, որ եւ մեր հանրութեանը ի վիճակի եղանք ի ցոյց դնել, թէ ինչի մասին է խօսքը: Նոյնը պէտք է անենք նաեւ խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ: Խաղաղութեան պայմանագրի մի քանի տարբերակներ կան. օրինակ կայ տարբերակ՝ ստորագրել շրջանակային համաձայնագիր, որը յարաբերութիւնների ընդհանուր շրջանակն է զծագրում եւ չի հասցէագրում բոլոր հնարաւոր հարցերը: Եթէ այսպիսի տարբերակով Ատրպէյճանի համար ընդունելի լինի առաջ գնալ, հնարաւոր է եւ կարողանանք: Բայց ես էլի եմ ասում, որ մենք մեզնից կախուած ամէն ինչ կ'անենք դրա համար: Նաեւ շատ կարեւոր է մեզ համար եւ ուզում եմ, որ մեր հանրութիւնը եւ նաեւ միջազգային հանրութիւնը սա արձանագրի, որ խաղաղութեան պայմանագրի առնուազն ուժի մէջ մտնելուց առաջ պէտք է դելիմիտացիայի գործընթացն աւարտուած լինի: Երբ ասում ենք, որ ճանաչում ենք տարածքային ամբողջականութիւնը, իսկ միւս կողմից Ատրպէյճան ասում է, որ ՀՀ-ի տարածք մենք չենք օկուպացրել, մենք էստեղ ենք, որտեղ մեր սահմանն է... այստեղ նրբութիւն կայ, որ մենք կարող է խաղաղութեան պայմանագիր ստորագրենք եւ Ատրպէյճանը կարող է շարունակել տարածքային նկատումներ ներկայացնել ՀՀ-ի նկատմամբ: Դրա համար մենք ասում ենք, որ պէտք է սահմանների յստակեցում լինի: Մենք մի քայլ արել ենք՝ յղում կատարելով Ալա-Աթայի հռչակագրի բովանդակութեանը, հիմա պէտք է յաջորդ քայլերն անենք: Խաղաղութեան պայմանագրի շրջանակային եւ ոչ շրջանակային տարբերակներ կան: Մենք նաեւ մեր առաջարկներն ենք ներկայացրել խաղաղութեան պայմանագրի տեքստի շրջանակի վերաբերեալ եւ նաեւ Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման ընթացքում հայկական պատուիրակութիւնն իր առաջարկները, մեկնաբանութիւնները, մեծ հաշուով՝ տեքստի մեր տարբերակը ներկայացրել ենք քննարկման, եւ յոյս ունենք, որ Ատրպէյճանը դա կառուցողական կը քննարկի եւ կ'արձագանքի», - ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

### Հայ Քաղաքական Կուսակցութիւնները Կը Դատապարտեն Ատրպէյճանի Զինուորական Ոճրագործներու Ոգեկոչումը Լիբանանի Մէջ

Ուրբաթ, 11 նոյեմբեր 2022-ին, Նոր Հաճնոյ Հնչակեան կուսակցութեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ հայ քաղաքական երեք կուսակցութիւններու արտակարգ ժողովը: Ժողովի աւարտին հրապարակուեցաւ մամլոյ հետեւեալ հաղորդագրութիւնը.

Հայ քաղաքական կուսակցութիւնները խստիւ կը դատապարտեն Աքքարի Ալ Քաուշիրա գիւղին մէջ՝ այսպէս կոչուած «Ատրպէյճանի հանրապետութեան նահատակ ներու» լիշատակին յուշարձանի մը բացման դէպքը, այլ խօսքով՝ Ատրպէյճանական բանակի «զոհեր»ուն լիշատակին կանգնեցուած յուշակոթողի երեւոյթը:

Ժողովականները գարմանք եւ վրդուծունք յայտնեցին, այս յուշարձանի տեղադրման եւ արարողութեան ընդհանուր հոլովոյթին մասին հաստատելով՝ որ արարքը իր էութեան մէջ կը հակասէ պաշտօնական Պէյրութի հրապարակած յայտարարութեան, առ այն, որ ատրպէյճանական զօրքերը ներխուժած են Հայաստանի ինքնիշխան տարածքներ եւ այնտեղ գործած ոճիրներ:

Նման հաստատում կատարած են նաեւ միջազգային ընտանիքի բազմաթիւ պետութիւններ, բացառելով Ատրպէյճանի ռազմական լանցագործ ըլլալու դիմագիծը եւ պահանջելով հայաստանեան տարածքներէն ատրպէյճանական բանակին հեռացումը:

Հիմա Լիբանանի մէջ, լիբանանեան պետական դէմքերու ներկայութեան կոգեկոչուի յանցագործ բանակ մը որ կը շարունակէ սպառնալ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն եւ որ փաստերը տուած է Սոււկայիթի, Կիրովպպատի, Թալիշի եւ Պուտաբէշտի մէջ ռազմական ամենավարագ ոճիրները գործադրելու եւ ցեղային զտումի քաղաքականութիւնը շարունակելու:

Նոյեմբեր 8-ին կայացած ամերիկեան ընտրութիւնները ցոյց տուին, ըստ կարգ մը քաղաքական մեկնաբաններու, թէ Տեմքրաթները հարց ունին Ֆլորիտայի մէջ, իսկ Հանրապետականներն ալ հարց ունին Թրամփի հետ: Ամերիկայի Քոնկրեսին եւ Ծերակոյտին հակաշիւրը (control) տակաւին որոշուած չէր ընտրութիւններուն յաջորդ օրն իսկ, եւ յայտնի չէր, թէ ո՞ր կողմը՝ Տեմքրաթ կամ Հանրապետական, պիտի կարենար ստանձնել այդ երկու օրէնսդիր մարմիններուն ղեկավարութիւնը: Նախագահ Պայտըն դժուարութիւն պիտի ունենայ իր ծրագրին մնացած մասը իրականացնելու յաջորդ երկու տարիներուն ընթացքին Հանրապետական Քոնկրեսի մը մէջ, սակայն Տեմքրաթական Ծերակոյտին մէջ ու պիտի յաջողի նշանակելու իր կողմէ առաջադրուած թեկնածուները վարչական եւ դատական մարմիններու մէջ:

Նախագահ Պայտըն ակնկալուածէն աւելի քիչ քոնկրեսական աթոռներ կորսնցուց եւ 2024-ին նախկին նախագահ Թրամփի վերընտրութիւնն ալ լուրջ դժուարութիւններու առջեւ դրուեցաւ: Հանրապետականներուն կողմը թեքող «Ուաշինկթըն Փոսթ»-ի սիւնակագիր եւ «Տոքս Նիուզ»-ի մեկնաբան Մարք Թիւրն ընտրութիւններուն արդիւնքը արժեւորելով՝ ըսաւ հետեւեալը. «Կարմիր ալիք չկար» (Հանրապետականներուն գոյնը նկատի առած). սա մեղադրական ամբաստանագիր է Հանրապետական կուսակցութեան: Սա մեղադրական ամբաստանագիր է այն պատգամին, որ արձակեցինք բռնադատներուն»:

Նախկին նախագահ Տանըլտ Թրամփի ուշագրաւ եւ երեւելի հաւանութեան արժանացած թեկնածուները յաջողութիւն չտեսան, եւ Տեմքրաթներու ամենամեծ յաղթանակը (նաեւ ամերիկահայութեան) արձանագրուեցաւ Ծերակոյտի Փենսիլվանիա նահանգի ընտրութեան մէջ՝ պարտութեամբը թրքածին թեկնածու Մեհմեթ Օզի, որուն կողքին կանգնած էր նախկին նախագահ Տանըլտ Թրամփը: Էրտողան-Թրամփ կնիքով ընտրապայքար մղող Մեհմեթ Օզը յաջողութեան պարագային պիտի դառնար հաւասարակշռուած (50-50) Ծերակոյտին մէջ «նժարը թեքող» ուժ մը՝ ոչ-հայնապաստ որոշումներու տեղի տալով:

Կարելի չէ մոռնալ, որ Թրամփ-էրտողան-Փուլին սիրերգութիւնը 2020-ին գետին ծառայեց մեր ծանր

պարտութեան եւ Արցախի մէկ մասի գրաւման: Ճօ Պայտընի որդեգրած հայնապաստ քաղաքականութիւնը (Հայկական Յեղասպանութեան ճանաչում եւ ամերիկեան լուրջ հետաքրքրութիւն Հայաստան-Ազրպէյճան հակամարտութեան հարցով) մեզ կը մղէ գոհանալու վերջին ընտրութիւններուն արդիւնքով:

Ու մինչ Նոյեմբեր 8-ի ընտրութիւններուն արդիւնքը մեզ կ'ոգեւորէ հոս՝ տեսնելով պարտութիւնը Մեհմեթ Օզի, անդին՝ Հայաստանի մէջ, կարգ մը դէպքեր խիստ մտահոգութիւն կը պատճառեն մեզի: Նոյեմբեր 1-4 էջմիածնի մէջ գումարուած Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովին յայտարարութիւնը, որ յստակօրէն կը կողմնորոշուի Հայաստանի ընդդիմադիր կողմին հետ եւ էջմիածնական Բազարտ սրբազանին բացայայտ մասնակցութիւնը ընդդիմադիրներու հաւաքոյթին շաբաթ, Նոյեմբեր 5-ին, եւ Ռուսիոյ մենատէր Փուլինի շքանշանի շնորհումը Գարեգին Բ.-ին ու նախապէս Համաշխարհային Հայկական Գաթնաժողովին մասնակցելու հրաւերը մերժող մեր գոյգ կաթողիկոսութիւններուն «կուսակցականացած» դիրքորոշումը ցոյց կու տան, թէ Հայ Առաքելական Եկեղեցին դարձած է կողմնակալ՝ ընդդիմադիր ուժերուն ծառայող, փոխանակ վեհանալով՝ բարձր կանգնելու քաղաքական տիրոջն: Քանիցս ժողովուրդին կողմէ ընտրուած հայրենի իշխանութեան դէմ կանգնող Հայ Առաքելական Եկեղեցին իր յայտարարութիւններով եւ կողմնորոշումներով կանգնած ըլլալ կը թուի մեր ժողովուրդին դէմ եւ կողքին ստանց, որոնք լքեցին մեր ժողովուրդը՝ սեփական շահեր հետապնդելով: Յետոյ, մեր ժողովուրդին կողմէ նզովուած եւ Փուլինի երկարամեայ ընկեր Ռոբերտ Քոչարեանի յաճարարութեամբ էր արդեօք, որ Փուլին Գարեգին Բ.-ին շնորհեց այդ շքանշանը: Արդեօք Գարեգին Բ.-ը ի՞նչ տեսակի գործ ու ծառայութիւն տուած էր Ռուսիոյ եւ քոչարեանասէր Վլատիմիր Փուլինին, որուն հոգատարութեան պակասին պատճառաւ տուինք հազարաւոր գոհեր եւ կորսնցուցինք սրբատեղիներ ու տարածքներ:

Մեհմեթ Օզի պարտութիւնը անկասկած ուրախացնող երեւոյթ է, եւ Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշումը իր ժողովուրդին մեծամասնութեան կողմէ ընտրուած իշխանութեան դէմ՝ մտահոգիչ:

Երկու դէպք մէկ շաբթուան մէջ՝ մէկը լաւ, միւսը ցաւ:

տանում են դէպի աղէտ, ինչին հայ ժողովուրդը աւերեսուեց 1920-ին եւ 2020-ին, առաջինը՝ «ազգային», երկրորդը՝ «ապագային» կառավարութեան մեղքով:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՍԱՐ)**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ԸՆԴԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

### Հայ-Ամերիկեան Թանգարանի Շինութեան Առաջին Փուլի Աւարտական Հանդէսը



Ազգային միասնութեան ժամեր ապրեցան գաղութի հայ համայնքի ներկայացուցիչները, որոնք եկած էին պատմական այս մեծ կառուցիչ կլենտէյլի Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ մշակութային կեդրոնի շինութեան առաջին փուլի աւարտական հանդէսին մասնակցելու: Ներկայ էին հոգեւոր առաջնորդներ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, Վերպ. Հենտրիկ Շահնազարեան կլենտէյլի քաղաքապետ Արտի Քասախեան, Հայ-Ամերիկեան Թանգարանի հոգաբարձութեան եւ տնօրէն Սորոս Կոլլի ու ազգային տարբեր կազմակերպութեանց ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ բարերարներ եւ պաշտօնական հիւրեր: Այս առթիւ շրջաց կատարուեցաւ առաջին փուլի, այսինքն գետնաչարկի կառատունը, որ կրնայ պարբաւել շուրջ 90 ինքնաշարժ եւ գրեթէ պատրաստ վիճակի մէջ է: Արդարեւ, գարնանման աշնանային պայծառ օրուան մէջ, Թանգարանի առաջին յարկի բացօթեայ տանիքը, գեղեցիկ երանգապնակի նման համախմբուած էր գաղութի ընտրանին, ներկայ ըլլալու պատմական եզակի իրադրութեան մը, որ պիտի դառնայ մնայուն կոթող մը

գապարծանք այս կառուցիչ շինութեան գործընթացին եւ մօտաւոր ապագային իրականալիք ծրագիրներուն մասին:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ կլենտէյլի քաղաքապետ Տիար Արտաշէս (Արտի) Քասախեան: Ան իր ուրախութիւնն ու անվերապահ զօրակցութիւնը յայտնեց այս նուիրական ձեռնարկի յաջողութեան համար:

Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ մշակութային կեդրոնի հոգաբարձութեան գործադիր քարտուղար Պերճ Կարապետեան, իր ելոյթին մէջ շնորհակալութիւն յայտնեց հայրենանուէր այս փառայեղ միջոցառումի աջակցներուն եւ յատկապէս նուիրատուներուն, որոնց շարքին նահանգային կառավարութեան, իր 19 միլիոն տոլարի աջակցութեան, դաշնակցային իշխանութիւններուն մէկ միլիոն տոլարի մասնակցութեամբ եւ այլ ազնիւ նուիրատուներուն, որոնց շնորհիւ հնարաւորութիւն կը ստեղծուի իրականացնելու այս ազգապարծանք ծրագիրը:

Ներկայ հոգեւոր առաջնորդներու անունով՝ փակման կուռ խօսքով պերճիմաստ ելոյթ մը ունեցաւ Արեւմտեան Թեմի Հայաստանեայց Եկեղեցւոյ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան իւրաքանչեւ պերճաբարձութեամբ, պանծացուց հայ ժողովուրդի ապրելու տեսլականը եւ անդրադառնալով կառուցման մէջ եղող Թանգարանին, ըսաւ որ այս մէկը՝ «յաղթանակ»ի կոչման արժանի է եւ... նորանոր յաղթանակներ մաղթեց հայ ժողովուրդին:

Հրաւիրեալները ազգային հպարտութեամբ եւ լաւագոյն տպաւորութիւններով բաժնուցանալով Թանգարանի շինութեան վայելքն, մաղթելով հեզասահ արագընթաց եւ բարեջաշող աւարտ:



կլենտէյլի սիրտին մէջ: Արդարեւ «երագային Թանգարան»ը արդէն սկսած է իրականութիւն դառնալ եւ երկու տարիէն հանրութեան պիտի ներկայանայ իր ամբողջական կերպարանքով:

Գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը: Շնորհալի երգչուհի Ալին Առուստամեանի կատարմամբ ունկնդրուեցաւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի պետական քայլերգերը: Ապա բացման խօսքով հանդէս եկաւ Հայ-Ամերիկեան Թանգարանի հոգաբարձութեան տնօրէն Շահնազարեան: Ան ողջունելէ ետք ներկաները, հակիրճ բացատրութիւններ տուաւ ազ-

նորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան իւրաքանչեւ պերճաբարձութեամբ, պանծացուց հայ ժողովուրդի ապրելու տեսլականը եւ անդրադառնալով կառուցման մէջ եղող Թանգարանին, ըսաւ որ այս մէկը՝ «յաղթանակ»ի կոչման արժանի է եւ... նորանոր յաղթանակներ մաղթեց հայ ժողովուրդին:

Հրաւիրեալները ազգային հպարտութեամբ եւ լաւագոյն տպաւորութիւններով բաժնուցանալով Թանգարանի շինութեան վայելքն, մաղթելով հեզասահ արագընթաց եւ բարեջաշող աւարտ:

### Միջազգային Գիտաժողով Պըրպէնքի Մէջ «Լեռնային-Ղարաբաղ- Այսօր եւ Վաղը» Նիւթով



Անցեալ շաբաթավերջին Նոյեմբեր 11-13, Հարաւային Գալիֆորնիոյ Պըրպէնք քաղաքի Ուըրտպլըի համալսարանի նիստերու դահլիճին մէջ, տեղի ունեցաւ միջազգային գիտաժողով մը, նուիրուած Արցախի այժմեական հարցերուն «Լեռնային Ղարաբաղ. Այսօր եւ Վաղը» (Nagorno-Karabakh: Today and Tomorrow) շահեկան նիւթին շուրջ:

Սոյն գիտաժողովը՝ կազմակերպուած էր Հայաստանեայց եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի, Արցախի ժառանգութեան Կոմիտէի եւ կարգ մը համալսարաններու համագործակցութեամբ: Միջազգային գիտաժողովի ընթացքին զեկոյցներ կարդացին Հայաստանի, Եւրոպայի եւ ԱՄՆ-ի համալսարաններու դասախօսներ ընկերաբաններ, պատմաբաններ, գիտնականներ ու տարբեր բնագաւառներու տասնեակ մը մասնագէտներ: Անոնք՝ առաւելաբար շեշտեցին Արցախի մէջ մարդու իրաւունքներու բռնաբարումը, ճարտարապետական եւ մշակութային չուարձաններու ոչնչացումը: Այլ խօսքով «Արցախը ներկայիս կարմիր գիծի վրայ է...: Պատճառն այն է որ ան չի կրնար գոյատեւել Ատրպէյճանի հովանիին ներքեւ»: Յեղասպանութիւնը կը շարունակուի անվրդով կերպով, նպատակ ունենալով կեանքը անտանելի դարձնել տեղացիներուն: Իրապաշտ ըլլալու համար «անհրաժեշտ են բանակցութիւններն ու

շինիչ երկխօսութիւնները» եզրակացուցին կարգ մը դասախօսները: Միջոցառումի աւարտական բաժնին ներկայ էին Լոս Անճելոսի Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոսարանի պատասխանատուներ, Ուաշինկթընի մօտ Արցախի մնայուն ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան, ինչպէս նաեւ լրագրողներ եւ հիւրեր:

Իր փակման խօսքին մէջ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, կազմակերպիչ յանձնախումբին անունով, իր խորին շնորհակալութիւնն ու գնահատութիւնը յայտնեց երկօրեայ գիտաժողովի բոլոր դասախօսներուն, որոնք իրենց մասնագիտական հետազօտութիւններով ու վերլուծումներով, վերաբեւոյցին Արցախի հիմնահարցի կենսական ոլորտներն ու տեղաբնակ ժողովուրդի արդար պահանջները:

Աւարտին՝ ելոյթ ունեցաւ առաջնորդարանի շաբաթօրեայ վարժարանի աշակերտութեան գեղարուեստական խումբը, ղեկավարութեամբ Տիկին Սիլվա Քաւուքճեանի:

Կիրակի, Նոյեմբերի 13ին, Սրբոց Ղեւոնդեաց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ Արցախի նահատակ զինուորներուն ու աղօթք Արցախի վերածնունդին համար: Պատարագին էր գիտաժողովին մասնակցող Ս. էջմիածնի միաբան Հոգշ. Գարեգին Վարդապետ Համբարձումեան:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

### Հաճնոյ Հերոսամարտի Ոգեկոչումը



#### ԳԵՈՐԳ ՔԵՕՇԿԵՐԵԱՆ

Հաճնոյ Հերոսամարտի 102-րդ տարեդարձը արժանավայել կերպով տոնուեցաւ Կիրակի, 30 Հոկտեմբեր 2022-ին:

Նախ, Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ յաւարտ սուրբ եւ անմահ Պատարագի, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Հերոսամարտին զոհուող նահատակ զինուորներուն եւ վեց հազար անմեղ բնակիչներուն հոգիներուն համար:

Պատարագին էր Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Արմաշ Եպիսկոպոս Նալպանտեանը: Սրբազան հայրը հոգեհանգստեան արարողութենէն առաջ, օրհնեց մատաղը եւ վեր առաւ նահատակ զինուորներու վճռակամութիւնը՝ դիմադրելու Քեմալական զորքին, որոնք ութ երկար ամիսներ պայքարեցան գրաւելու արծուաբոյն Հաճնը:

Պատարագին ետք, տեղի ունեցաւ աւանդական մատաղի (հերիսայ) մատակարարութիւնը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փաստինայի համալիրին՝ Պոյաճեան սրահին մէջ, որ պատէպատ լեցուած էր Հաճնցի թէ այլ Կիլիկեցի 350 հայրենակիցներով:

Օրուան հանդիսավարն էր Հաճնցի մօրմէ սեռած՝ երիտասարդ սարկաւազ Ալեքս Կիրակոսեանը: Ան հրաւիրեց կոչնականները որ յոտնկայս ունկնդրեն Միացեալ Նահանգներու, Հայաստանի Հանրապետութեան եւ Հաճնոյ Հայրենակցական Միութեան քայլերգները:

Ալեքս Կիրակոսեան ապա հրաւիրեց Հաճնոյ Հայրենակցական Միութեան Ատենապետ Զաւէն Քէօշկէրեանը՝ որ Բացման խօսքով հանդէս գայ: Պարոն Քէօշկէրեան բացատրեց թէ պատրաստած էին պատշաճ յայտագիր մը, որ պիտի գործադրուէր ճաշի սպասարկութենէն ետք: Ան ապա հրաւիրեց Արմաշ Սրբազանը, որ կատարէր ճաշի օրհնութիւնը:

Ճաշի սպասարկութենէն ետք՝ բեմ հրաւիրուեցաւ Տոքթ. Զաւէն Քէօշկէրեանը, որ ներկայացնէ օրուան բանախօս՝ Տոքթ. Վարդան Թաշճեանը:

Տոքթ. Թաշճեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Վկայուած է տեղւոյն Ֆրանսական Սէն Ժոզէֆ համալսարանէն եւ դարձած ծանօթ մանկաբոյժ: Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, ան գաղթած է Միացեալ Նահանգներ եւ հաստատուած Գալիֆորնիա, ուր 1989-ին տիրացած է ընդհանուր բժշկութեան եւ վիրաբուժութեան արտօնագրի:

Տոքթ. Թաշճեան սկիզբէն եւ

մօտէն առնչուած եղած է հայ բժիշկներու համաշխարհային գործունէութիւններուն եւ առ այդ՝ 2019 թուականին մասնակցած է Երեւանի մէջ կայացած՝ "Հայաստանի 5-րդ բժշկական միջազգային համագումարին": Իսկ 2017-ին լոյս տեսաւ իր "Բժիշկ, հիւանդ եւ դեղօրայք" գիրքը:



Տոքթ. Թաշճեան իր բանախօսութիւնը սկսաւ երգիծանքով եւ աւարտեց զայն ոգեշունչ խրատականով մը: Ան ըսաւ որ բանախօս մը նկատած էր թէ առաջին շարքի

### Գրիգոր Սաթամեանի «Թատերական Ուղեւորութիւն» Գիրքին Շնորհանդէսը



Հ.Բ.Լ.Մ.ի Գրիգոր Սաթամեան թատերախումբի վարչութիւնը անցեալ Կիրակի, Նոյեմբեր 13, 2022ին կազմակերպած էր շնորհանդէս մը, նուիրուած տաղանդաւոր բեմադրիչ, թատերագիր եւ դերասան Գրիգոր Սաթամեանի «Թատերական Ուղեւորութիւն» գիրքին: Հակառակ նոյն օրուան տարբեր միջոցառումներուն, խուներամ բազմութիւն մը փութացած էր Փաստինայի Հ.Բ.Լ.Մ. ի Պոյաճեան սրահ:

Այս առթիւ մեծ արուեստագէտի կեանքին եւ 60 տարիներու բեղուն գործունէութեան մասին խօսեցան օրուան հանդիսավար Գեորգ Քէօշկէրեան եւ մասնաւորա-

բար՝ գլխաւոր բանախօս Տոքթ. Գրիգոր Սիմոնեանը:

Խօսք առաւ նաեւ վաստակաշատ մեծարեալ Գրիգոր Սաթամեան: Ան իր խորին շնորհակալութիւնները յայտնեց գիրքի մեկենաս Տիար Նազարէթ Գեւորեանին եւ աջակից ենովք Պալիկեանին: Գ. Սաթամեան իւրապատուկ հիմնորով համեմուած դրուագներ պատմեց իր անցեալի գործունէութենէն:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Տիգրան Էփրեան եւ դրուագներ պատմեց Գ. Սաթամեանի թատերական կեանքին:

Գնահատելի նախաձեռնութիւն մըն էր «Պատիւս արժանաւորաց»:

վրայ նստած կոչնական մը քունի անցած էր: Ուստի խնդրեց անոր քովը նստողէն որ արթնցնէ գինք:

Եւ ահա այդ կոչնականին անակնկալ պատասխանը: "Դուն քնացուցիր, դու'ն արթնցուր:"

Տոքթ. Թաշճեան Հաճնոյ Հերոսամարտին մասին ուշադրաւ մէջբերումներ կատարեց Գէորգ Կառվարենցին, Սարգիս Ճէպէճիէն եւ Արշակ Զոպանեանին, որոնցմէ եզ-

րակացուց որ "Հաճնը ինկաւ, բայց չմեռաւ:"

Յարգելի բանախօսը դիտել տուաւ թէ Հաճնոյ Հերոսամարտը նոյնիսկ ծանօթ էր օտարներուն եւ Ֆրանսացի մտաւորականէ մը մէջբերում մը կատարեց եւ թարգմանաբար բացատրեց թէ հերոսամարտի մէջէն պիտի գայ նոր

Շար.ը էջ 15

2022 ARMENIAN BUSINESS BRIDGE

**ARMENIAN TRADE SHOW**

2022 SATURDAY, DEC 3-4  
SUNDAY, DEC 3-4

Civic Center Plaza, 613 E. Broadway, Glendale, CA 91206-4308, USA

fb.com/ArmenianBB | fb.com/IBRSCouncil

# «Hye Talks». Ամերիկահայ Երիտասարդները Բննարկեցին Հայաստանին Եւ Արցախին Աջակցելու Նոր Ուղիները



Ամերիկահայ երիտասարդութեան ղեկավարները փոխադրուած է. եթէ անցեալին անոնք միայն երկրորդ, երրորդ սերունդի ներկայացուցիչներ էին, ապա այժմ նաեւ Հայաստան ծնած կամ Հայաստանեան ընտանիքներէ սերած երիտասարդներ են, որուն համար հայրենիքը այլեւս սոսկ խորհրդանիշ չէ, այլ վայր, ուր իր մեծամայրն ու մեծհայրը կ'ապրին, կ'ըսեն մասնագէտները՝ յղում ընելով վերջերս կատարուած հետազոտութեան մը: Այդ երկու խումբերը այժմ կը շփուին, ու կը ձեւաւորուի սփիւռքի հայ երիտասարդի նոր որակ, որ կ'ենթադրէ աւելի մեծ ներգրաւուածութիւն հայրենիքին առնչուող գործերուն մէջ:

Այդ ներգրաւուածութեան ձեւերն ու ճանապարհներուն մասին պատկերացումները քննարկուեցան Լոս Անճելոսի մէջ տեղի ունեցած «Hye Talks» խորագրով քննարկման:

«Մանաւանդ հիմա, որ ունեցած ենք պատերազմը, շատ կորուստներ ու նաեւ վերջին դժուարութիւնները Հայաստանի մէջ, որ հայ ազգը դժուար վիճակի մէջ կը պահեն, կ'ուզէինք այս խօսակցութիւնը ունենաք, որ երիտասարդները լսեն ու տեսնեն, որ շատ առիթներ կան, որ իրենք կրնան մասնակցիլ ու համայնքը ուժեղացնել ու իրենց աշխատանքով երկիր մը վերաշինուի», - ըսաւ Գալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ Ատրին Նազարեանը:

Ամերիկահայ երիտասարդները պէտք է իմանան, որ իրենց հետ շատ յոյսեր կը կապենք, եւ այժմ ժամանակն է, որ անոնց կարողութիւններն առաւելագոյնս օգտագործուին, կ'ըսեն կազմակերպիչները:

«Երկիրը պէտքով չունի, երբ լաւ է, երկիրը օգնութեան պէտք ունի, երբ ցաւի, դժուարութեան մէջ է: Հիմա է, որ Հայաստանը եւ Արցախը մեզի պէտք ունին՝ իբրեւ սփիւռք, եւ մենք պէտք է ջանք թափենք ու մեր տաղանդները օգտագործենք, որպէսզի երկիրը հզօրացնենք եւ համաշխարհային հասարակութեան մէջ հզօրանանք ու դեր ունենանք աւելի մեծ», - ըսաւ Գալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ Ատրին Նազարեանը:

Քննարկման հրաւիրուած էին ամերիկեան համալսարաններու հայկական ուսանողական միութիւններն ու ամերիկեան իրականութեան մէջ յաջողութեան հասած յայտնի դէմքեր՝ իրենց փորձով ու պատմութիւններով:

«Իրենք են ապագան: Օրինակ՝ մեր սերունդին համեմատ-մենք մեզ կը տեսնէինք՝ սորվող, բայց ոչ առաջնորդ կամ ղեկավար-ես իմ ուսանողներու մէջ կը տեսնեմ առաջնորդելու ձիրքը, բան մը փոխելու, հիմա աշխարհը փոխուած է, այնքան արագ կը փոխուի աշխարհը արհեստագիտականօրէն, որ չեմ կարծեր՝ ժամանակ ունինք սպասելու. պէտք է քայլերու դիմենք, եւ իրենք պատրաստ են, մենք թոյլ պիտի տանք», - ըսաւ Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանի հայագիտական հիմնարկի փոխտնօրէն Շուշանիկ Կարապետեանը:

Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանին մէջ կ'առաջարկեն նաեւ կրթաթոշակ, ճանապարհիկեցութեան ծախս հայագիտական ուղղութեամբ կամ որեւէ նիւթով՝ Հայաստանի մէջ հետազոտութիւն կատարելու համար:

«Մեր ուսանողներուն մէջ այսպիսի տարանջատում կայ. հայկականը ու իրական աշխարհը. կայ այն տպաւորութիւնը է, որ հայկականը իրական աշխարհին չի պատկանիր, ես կ'ուզեմ ցոյց տալ, որ անոնք նոյնն են եւ հայկականով կրնան մտնել միջազգային հարթակ ու ըսելու բան ունենալ ոչ միայն Հայաստանին, այլ ամբողջ աշխարհին», - ըսաւ Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանի հայագիտական հիմնարկի փոխտնօրէն Շուշանիկ Կարապետեանը:

Ամերիկահայ երիտասարդները նշեցին, որ քննարկումները պիտի շարունակեն, մինչեւ գտնեն իրենց մտահոգութիւնները գործնական քայլերու վերածելու ճանապարհները:

«Պատերազմէն ետք եւ նոյնիսկ այսօր, երբ յարձակումներ կան հայրենիքի վրայ, տպաւորութիւն է, թէ հողէն, գինուրէն բացի, մենք՝ որպէս համայնք, կորսնցուցած ենք մեր գիտակցութիւնը՝ որպէս հաւաքական ուժ, որ պիտի շարժի առաջ: Մենք կը սզանք բոլորին համար, ինչ կորսնցուցած ենք, գինուրներուն համար եւ կը յարգենք անոնց յիշատակը, բայց միեւնոյն ատեն տպաւորութիւն կայ կարծես, որ կորսնցուցած ենք մենք մեզ», - ըսաւ «Hye Talks» քննարկման կազմակերպիչ Լիլի Սարաֆեանը:

Կ'ուզենք աւելի շատ խօսիլ մեր ապրումներուն մասին, ըսին ամերիկահայ ուսանողները: Նշեցին նաեւ, որ դեռ կը դժուարանան համայնքի լիարժէք մաս դառնալ, բայց հայրենիքի կեանքին մասնակցիլ շատ կ'ուզեն:

# Յոյն Պատգամաւորները Այցելեցին Հայոց Ցեղասպանութեան Յուշահամալիր



Յունաստանի խորհրդարանի պատգամաւորները Նոյեմբեր 9-ին այցելեցին Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր: Հիւրերը ղեկավարեց եւ յուշահամալիրի ստեղծման պատմութիւնը ներկայացուց Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի գիտական աշխատանքներու գծով փոխտնօրէն Էտիթա Գոյոյեանը:

Փոխտնօրէնը անդրադարձ կատարեց անցեալ դարավերջին Ատրպէճանի Սուճալիթ, Կիրովպատ (Գանձակ), Պաքու քաղաքներուն մէջ ատրպէճանական կառավարութեան կազմակերպած կոտորածներուն զոհ գացած հայերու յիշատակին Միծեռնակաբերդի տարածքին տեղադրուած երեք խաչքարերու եւ Արցախեան գոյամարտի տարիներուն Յուշապատի ղեկավար հատուածին մէջ յուղարկաւորուած հինգ ազատամարտիկներու պատմութիւններուն՝ շեշտելով կայր տեղի ունեցածին եւ Հայոց ցեղասպանութեան միջոցով:

Յունաստանէն ժամանած պատուիրակութեան անդամները ծաղիկներ դրին անմար կրակին առջեւ եւ մէկ վայրկեան լռութեամբ յարգել Հայոց ցեղասպանութեան մէկուկէս միլիոն անմեղ զոհերուն յիշատակը:

Էտիթա Գոյոյեանը հիւրերուն ուղեկցած է Յուշապատի մօտ, որուն յետնամասին մէջ ամփոփուած են օտարազգի այն հասարակական, քաղաքական գործիչներուն, միախոնրներուն մասունքները, որոնք իրենց բողոքի ձայնը բարձրացուցած են ընդդէմ թրքական կառավարութեան իրագործած Հայոց ցեղասպանութեան:

Հիւրերը շրջեցան նաեւ Հայոց ցեղասպանութեան թանգարանը, ուր ՀԾԹՀ զբօսավար Լիանա Ազիզեանի ուղեկցութեամբ ծանօթացան մշտական եւ ժամանակաւոր ցուցադրութիւններուն: Այցելութեան աւարտին անոնք գրառումներ կատարեցին Պատուաւոր հիւրերու յուշամատենին մէջ:

## Հաճոյ Հերոսամարտի Ոգեկոչումը

Շարունակուած էջ 13-էն

Կ'ըլլանք:

սերունդ մը: Ան ապա որպէս ապացոյց՝ նշեց Արամ Խաչատուրեանը, Վիքթոր Համբարձումեանը եւ դեռ վերջերս Նոպելեան մրցանակ ստացող Գալիֆորնիաբնակ Դոկտ. Արտեմ Փաթափութեանը:

Իսկ որպէս եզրակացութիւն՝ միասնականութիւնը ջատագովելով, Տոքթ. Թաշճեան իր յօրինած հետեւեալ բանաստեղծութիւնը արտասանեց մեզի:

Անմիաբան՝ մենք իրարու բռն կ'ըլլանք:

Ուշ կամ կանուխ՝ ուրիշներուն կեռ կ'ըլլանք:

Միաբանութեամբ՝ մենք իրարու տր կ'ըլլանք:

Եւ Մասիսին ցմաճ կանգուն լեռ՝

Որքան ճիշդ է Տոքթ. Թաշճեանի մատնանշումը, որ տարիներ առաջ Չարենց ալ ըսած է: "Ով Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը՝ քո հաւաքական ուժի մէջ է:"

Գեղարուեստական չափազանքը գործադրուեցաւ Հաճոյցի մօրմէ սեռած՝ սիրուած երգիչ Դաւիթ Սամուէլեանի կատարողութեամբ, որուն երգեհոնի վրայ կ'ընկերակցէր Արամ Լէփէճեանը: Դաւիթ՝ իր ազգային-ազատագրական երգերով մեծապէս խնդավառեց բոլոր կոչնականները, անխտիր:

Հոս տեղին է յիշել որ Հաճոյց Հայրենակցական Միութիւնը հիմնուած է Փաստինայի մէջ՝ 1928 թուականին:

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more... Please reach out for quotes Website: [norayr.daduryan.com](http://norayr.daduryan.com) Email: [norayrdaduryan@gmail.com](mailto:norayrdaduryan@gmail.com)

# Արեւիկուն Գիտեն Սահմանը Մեծ Ու Փոքրով Ամուր Պահելու Բանաձեւը



Սահմանապահ Արեւի բնակավայրի բնակիչ Արփինէ Մաթեոսեանը իրաչափութեամբ Արեւիկունի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի ավարտելուց յետոյ երկու տարի աշխատել է Երեւանում որպէս մանկավարժ երեխաներին կաւարժութիւն ու նկարչութիւն է դասաւանդել: Դասաւանդելուն գուզընթաց երբեմն վերապատրաստման դասընթացների է մասնակցել: Արփինէն վաղուց երազում էր արհեստանոց հիմնադրել, որտեղ կը կարողանար ձեռագործ իրեր պատրաստել, զբաղուել դրանց վաճառքով եւ իհարկէ, դասաւանդել:

2019 թուականին որոշեց դասնել հենց Արեւիում, քանի որ հարազատ բնակավայրը եւս արհեստանոցի կարիք ունէր, Արեւիում երեխաները հնարաւորութիւն չունէին յաճախելու նկարչութեան կամ կաւարժութեան դասերի:

«Յիշում եմ, երբ ինքս էլ փոքր էի եւ ուզում էի նկարչութեան դասերի յաճախել, մեր գիւղում չկար այդպիսի խմբակ: Ծնողներս ինձ Եղեգնաձոր էին տանում նկարչութեան դասերի, իսկ դասն անում էր իրենց հայրը: Մտածեցի՝ եթէ արհեստանոց հիմնեմ, Արեւիում ապրող երեխաները չեն ունենայ այն խնդիրը, որը ես ունէի մանուկ հասակում: Եւ լծուեցի գործի», - պատմում է Արփինէն:

Արեւիի համայնքապետարանը բնակավայրի մշակութի տան առաջին հարկը վարձակալութեամբ տրամադրեց Արփինէին, որպէսզի այնտեղ գործի արհեստանոցը: Առաջին հարկը լքուած էր, վաղուց չէր նորոգուել: Արփինէն ներկեց պատերը, իրենց տնից աթոռներ տարաւ, որոշ իրեր գնեց, որոշ իրեր էլ մտերիմները տրամադրեցին: 2019-ի Նոյեմբերին արհեստանոցը բացուեց, եւ հենց առաջին ամսում Արփինէն արդէն 50 աշակերտ ունէր: Նա կաւարժութիւն, նկարչութիւն, հեղինակագործութիւն էր դասաւանդում երեխաներին:

«Որոշ ժամանակ անց բատիկա (նկարչութիւն գործուածքի վրայ) եւ մենթալ թուաբանութիւն դասաւանդող մասնագէտները ցանկութիւն յայտնեցին արհեստանոցում նոր խմբակներ բացելու: Ես, իհարկէ, շատ ուրախացայ: Այդ խմբակներն էլ աւելացան», - ասում է Արփինէն:

Ժամանակի ընթացքում ոչ միայն երեխաները, այլեւ Արեւիի երիտասարդները սկսեցին հաւաքուել այստեղ. մշակութային միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր են կազմակերպում: Արհեստանոցն

Արեւիում դարձել է մշակութային իւրօրինակ կեդրոն:

11-ամեայ Լիլիան չիշում է՝ երբ 2019-ին արհեստանոցը բացուեց, շատ ուրախացաւ. վերջապէս նկարչութեան դասերի յաճախելու հնարաւորութիւն ընձեռուեց: Հիմա արդէն մենթալ թուաբանութեան դասերի է յաճախում:

«2020-ի Յուլիսին մասնակցեցի նկարչական մրցոյթի եւ խորախուսական մրցանակ ստացայ: Ի դէպ, մեր խմբակներից գատ՝ արհեստանոցը մեզ համար նաեւ հիանալի ժամանցի վայր է. երբեմն հաւաքում ենք մուշտ կամ ֆիլմ դիտելու: Արհեստանոցն ինձ եւ ընկերներս համար մի վայր է, որտեղ իւրաքանչիւրս կարող ենք ժամանակ անցկացնել եւ նոր գիտելիքներ ստանալ», - ասում է Լիլիան:

Արհեստանոցի հիմնադրումից մէկ տարի անց Արփինէն դրամաշնորհային ծրագրերին դիմելու համար գաղափարներ ու ծրագրեր մշակեց, առաջին ծրագիրը «Իմ Հայաստան»-ն էր, որին մասնակցեց ու դրամաշնորհ շահեց: Յետոյ այլ դրամաշնորհային ծրագրերի էլ մասնակցեց ու յաղթեց, արհեստանոցին գոյք նուիրեցին, տարածքը հիմնանորոգուեց:

Յետոյ Արփինէն իր աշակերտներին սովորեցրեց ինչպէս կարելի է գրանցուել դասընթացների, դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու համար հայտեր ներկայացնել: Որոշ ժամանակ անց երեխաներից մի քանիսը դրամաշնորհներ ստացան՝ արհեստանոցում աղբի տեսակաւորման տարաներ տեղադրուեցին, յարակից այգին բարեկարգուեց:

Քանի որ Արեւիում տարուայ բոլոր ամիսներին զբօսաշրջիկներ են լինում, Արփինէն որոշել է նրանց էլ անմասն չթողնել արհեստանոցի եռուզեռից: Երեկոյեան զբօսաշրջիկների համար կաւարժութեան վարպետաց դասընթաց է անցկացնում, ասում է՝ նրանց կաւարժութիւնը շատ է հետաքրքրում, սիրով տարբեր իրեր են պատրաստում, ոմանք հիւրատներում մնալուն գուզընթաց ամէն օր մի քանի ժամ յաճախում են կաւարժութեան դասերի:

«Այս ամէնից գատ՝ նաեւ պատուէրներ եմ ստանում, կաւէ իրեր եմ պատրաստում, զբաղում դրանց վաճառքով: Իմ օրն արհեստանոցում է անցնում: Մեր գիւղ եկող հիւրերը, այդ թւում արտերկրից, սովորաբար նաեւ արհեստանոց են գալիս: Գիւղի երիտասարդներն էլ երեկոյեան զբօսնելիս անպայման գալիս են արհեստանոց, հետեւում են աշխատանքիս, զրուցում ենք,

## ՑԱՒԱՑԱԿԱՆ

ԼՈՒՏՈՎԻԿԱ ԱՅՆԹԱՊԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Հայաստան) «Մասիս»-ի խմբագրութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսինին՝ ամերիկահայ մտաւորական եւ բարեար Տոքթ. Յակոբ Այնթապլեանին եւ Լոս Անձելոսի Իրանահայ Միութեան:

### Thank You Note for Arpiar Janoyan

"Hermine Janoyan and her family express their sincere thanks and gratitude to His Holiness Karekin II, Catholicos of all Armenians, the esteemed clergy who officiated the funeral of Arpiar Janoyan, Archbishop, Hovnan Derderian, Primate of the Western Diocese, Archbishop Moushegh Mardirossian, former Prelate of the Western Prelacy, Bishop Pakrad Berjekian, Archpriests, Shnork Demirjian and Arshag Khatchadourian. We also thank several diplomats of the Republic of Armenia, Professor Richard G. Hovannisian, organizations The Armenian General Benevolent Union (AGBU), The Armenian International Women's Association (AIWA), The Armenian Assembly of America, The Armenian Missionary Association of America (AMAA), The Orphan Fund Committee, USC Institute of Armenian Studies, The Armenian American Museum, The Armenia Fund, and the Armenian press. Additionally, we express our love to the extended family and dear friends of Arpiar Janoyan near and far for comforting us with many calls, texts, cards, emails, flowers, visits, and generous donations. We deeply appreciate your expressions of sympathy."

## Արցախը Բանակցութիւններից Դուրս Թողած

Շարունակուած էջ 14-էն

իրաւունքով: Երբ այս պարզ ճշմարտութիւնը չեն հասկանում դարաբաղեան կարգաւորման գործընթացից հեռու մարդիկ, ներքի է, իսկ երբ չի հասկանում կամ ձեւացնում է, թէ չի հասկանում վարդան Օսկանեանը, դա արդէն տարօրինակ է, եթէ չասենք՝ անբարոյական: Վերջին գրաւոր առաջարկը, որ ներկայացուել է ԼՂ-ին, այսպէս կոչուած, «Ընդհանուր պետութեան» տարբերակն է: Դրանից յետոյ մշակուած առաջարկները՝ Քիւլեանեան եւ Մադրիդեան տարբերակները, ներկայացուել են միայն Ատրպէյճանին եւ Հայաստանին: Այսինքն, 1999 թուականից սկսած՝ Ղարաբաղը դէ ֆակտո դադարել է հակամարտութեան կողմ լինելուց, թէեւ դէ իւրէ պահպանում է ԵԱՀԿ Բուդապէստեան գագաթնաժողովում ձեռք բերուած այդ կարգավիճակը: Ողջ դժբախտութիւնն այն է, որ Բուդապէստեան գագաթնաժողովի որոշումը, որը թերեւս դարաբաղեան կարգաւորման գործընթացում հայկական դիւանագիտութեան մեծագոյն նուաճումը կարելի է համարել, ոտնատակ է արուել ոչ թէ համախաղաղահայերի կամ Ատրպէյճանի, այլ հայկական կողմի, մասնաւորապէս՝ Ռոբերտ Քոչարեանի, Վարդան Օսկանեանի եւ Արկաղի Ղուկասեանի շանքերով: Նրանք գործել են բանական հիմնաւորում եւ արդարացում չունեցող ճակատագրական սխալ, որի հետեւանքները ծանր են նստելու Հայաստանի եւ Ղարաբաղի վրայ: Մինչ Քոչարեանի գրասենեակի համակարգողը կը ծանօթանայ յիշեալ վկայութիւններին, անդրադառնալ նրա մէկ այլ կեղծ պնդմանը, թէ՛ «նախագահ Քոչարեանի ժամանակ Միւսկի խմբի համախաղաղահայերը գրեթէ միշտ այցելել

են Արցախ եւ տասնեակ անգամներ բանակցութիւններ են ունեցել Արցախի Հանրապետութեան նախագահի հետ. Փաշինեանի օրօք այդպիսի բան ընդհանրապէս չի եղել: Սա փաստում է, որ Արցախը բանակցութիւններից վերջնականապէս դուրս թողեց հենց ինքը»: Նիկոլ Փաշինեանին ստախօսութեան մէջ մեղադրող Միկոյեանը, մեղմ ասած, շարքային ստախօս է, քանի որ եթէ իրեն մի քիչ նեղութիւն տար ու թերթեր վերջին մի քանի տարուայ լրահոսի արխիւը, ապա հաստատ նման աղաղակող սուտ չէր արտաբերի: Նա, վստահաբար, կը յայտնաբերէր, որ մասնաւորապէս 2018 թ. Հոկտեմբերի վերջին ԵԱՀԿ Մինսկի խմբի համախաղաղահայեր Ստեֆան Վիսկոնտին (Ֆրանսա), Էնդրիու Շոֆերը (ԱՄՆ) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէլ Կասպլիկը Ստեֆանակերտում հանդիպումներ են ունեցել ԼՂ նախագահ Բակո Սահակեանի, արտգործնախարար Մասիս Մայիլեանի եւ պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեանի հետ: Արցախի նախագահի պաշտօնական կայքէջի փոխանցմամբ՝ միջնորդների հետ Բ. Սահակեանի հանդիպման ժամանակ քննարկուել են ստրպէյճանա-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորմանը, Արցախի ու Ատրպէյճանի սահմաններում տիրող իրավիճակին եւ վերջին գրագցումներին առնչուող հարցեր:

Երկրորդ նախագահի գրասենեակը, փաստօրէն, համակարգում է ոչ միայն ստախօս, այլեւ բանից անտեղեակ մէկը, ուստի կարիք կայ, որ բանիմաց մէկը համակարգի վերջինիս մտքերը՝ հանրութեան դատին յանձնելուց առաջ: Այլապէս խախտուակ լինելն անխուսափելի է:

«Civic.am»

միջոցառումների վերաբերեալ քննարկումներ անում...», - պատմում է Արփինէն:

Սահմանապահ Արեւիում 44-օրեայ պատերազմի օրերին էլ արհեստանոցը բաց էր, մեծ ու փոքր հաւաքում էին, պաշտպանիչ ցանցեր գործում: Այդ օրերին կրակոցներ էին լսում նաեւ Արեւիում, ոմանք սահմանին էին, ոմանք էլ թիկունքում էին իրենց բաժին

պաշարը մղում: Արփինէն վերջին տարիներին արտասահմանեան երկրներ է մեկնել՝ վարպետաց դասերի, բաց միշտ վերադառնում է Արեւի: Նա վստահ է՝ ուժեղ պետութիւն կերտելու համար սահմանը պէտք է ուժեղացնել: Սահմանային բնակավայրերից չպէտք է հեռանալ, հարկաւոր է մնալ, շէնացնել, մեծ ու փոքրով ամուր պահել սահմանը:

### «Արսենալ» Կը Շարունակէ Գլխաւորել Փրեմիեր Լիգայի Աղիւսակը

Premier League standings										
Season 2022-23										
Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts	Last 5	
1 Arsenal	14	12	1	1	33	11	22	37	●●●●●	●●●●●
2 Man City	14	10	2	2	40	14	26	32	●●●●●	●●●●●
3 Newcastle	15	8	6	1	29	11	18	30	●●●●●	●●●●●
4 Tottenham	15	9	2	4	31	21	10	29	●●●●●	●●●●●
5 Man United	14	8	2	4	20	20	0	26	●●●●●	●●●●●

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի 16-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» հիւրընկալեց «Ուլվերհեմփթընին»: Լոնտոնեան խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

14 խաղէն յետոյ «Արսենալ» 37 կէտով առաջատարն է եւ 5 կէտի առաւելութիւն ունի ախոյեան «Մանչեսթըր Սիթիի» նկատմամբ, որ նոյնպէս կատարած է 14 հանդիպում:

Փրեմիեր Լիգայի յաջորդ հանգրուանը կը շարունակուի աշխարհի առաջնութենէն յետոյ, Դեկտեմբերի 26-ին:

### «Մանչեսթըր Սիթի» Անսպասելի Պարտութիւնը

Անգլիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» ընդունեց «Պրենթֆորտին»: Կատարուած խաղի խոսակց Գոլաբոլիտայի գլխաւորած խումբը պարտուեցաւ 1:2 արդիւնքով:

Հիւրերը խաղի հաշիւը բացին 16-րդ վայրկեանին անգլիացի յարձակող Այվըն Թոնիի կողմէն շնորհիւ: «Մանչեսթըր Սիթի» անգլիացի կիսապաշտպան Ֆիլ Ֆոտենը առաջին խաղակէսին աւելացուած ժամանակին վերականգնեց հաւասարութիւնը: «Պրենթֆորտի» յաղթական կողմը աւելացուած է 8-րդ վայրկեանին նշանակեց Այվըն Թոնին՝ ձեւակերպելով տուպլ:

### «Թոթեմհեմի» Եւ «Լիվերփուլի» Յաղթանակները

Անգլիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին «Թոթեմհեմ» իր մրցեցաւ «Լիտո Նոնայթըրտի» հետ: Խաղացի Անտոնիօ Քոնթէի գլխաւորած խումբը յաղթանակ արձանագրեց 4:3 արդիւնքով:

15 խաղէն յետոյ «Թոթեմհեմ» 29 կէտով երրորդն է:

«Լիվերփուլ» հիւրընկալեց «Սաութհեմփթընին»: Գերմանացի ետերգին Կլոպի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

14 խաղէն յետոյ «Լիվերփուլ» վաստակած է 22 կէտ եւ 6-րդն է: «Սաութհեմփթըն» (15 խաղ) նախավերջինն է՝ 12 կէտ:

### «Ինթեր» «Աթալանթաի» Նկատմամբ Տօնած Յաղթանակին Շնորհիւ 4-րդն Է Միխարեանը Մասնակցեցաւ Խաղին

Իտալիոյ ֆութպոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի «Ինթեր» հիւրընկալուած էր «Աթալանթային» եւ առաւելութեան հասաւ 3:2 արդիւնքով: Միլանեան ակումբի կազմին մէջ երկու կողմի հեղինակ դարձաւ Էտիեն Զեկոն, իսկ Փալմիտոն դարձաւ ինքնակոլի հեղինակ:



Հայաստանի ֆութպոլի ազգային խումբի նախկին ակումբի շարունակող Միխարեանը «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր, սակայն փոխարինուեցաւ 80-րդ վայրկեանին:

Այս յաղթանակէն յետոյ «Ինթեր» բարձրացաւ 4-րդ դիրքը եւ ունի 30 կէտ:

Մրցաշարային աղիւսակի առաջատարը 41 կէտով «Նափոլին» է:

### Մարիամ Սկրտչեանը՝ Շախմատի Եւրոպայի Մ18 Տարեկաններու Ախոյեան



Հայաստանի ճատրակի կանանց առաջնութեան ախոյեան Մարիամ Սկրտչեանը աշխարհի մինչեւ 18 տարեկաններու առաջնութիւնը յաղթելէ յետոյ այժմ նաեւ ոսկէ մետալակիր դարձած է Եւրոպայի նոյն տարիքայիններու առաջնութեան:

Սկրտչեան Անթալիայի մէջ ընթացող Եւրոպայի պատանեկան առաջնութեան նախավերջին՝ 8-րդ հանգրուանին յաղթանակի հասած է իր լանտացի Թորիշա Քանյամարայի նկատմամբ եւ ժամանակէն շուտ նուաճած է Եւրոպայի ախոյեանի տիտղոսը:

Վերջին հանգրուանէն առաջ Մարիամը իր կէտերու թիւը հասցուցած է 7,5-ի եւ անհասանելի դարձած մրցակիցներու համար:

Հայաստանի գործող ախոյեան Մարիամ Սկրտչեանը այս տարի նախապէս նուաճած էր նաեւ աշխարհի Մ18 տարեկաններու ախոյեանի տիտղոսը՝ յաղթելով բոլոր 11 պարտիաներուն մէջ:

### Մ-18 ԵԱ. Մամիկոն Ղարիպեանը՝ Պրոնգէ Մետալակիր

Հայաստանի ներկայացուցիչ Մամիկոն Ղարիպեանը դարձաւ Անթալիայի մէջ աւարտած ճատրակի Եւրոպայի մինչեւ 18 տարեկաններու առաջնութեան պրոնգէ մետալակիր:

Վերջին հանգրուանին ան սպիտակներով ոչ ոքի խաղցաւ ատրպէյճանցի Խազար Պապազադայի հետ եւ 9 հնարաւորէն վաստակեցաւ 6,5 կէտ:

Ախոյեանի կոչումը նուաճած էր Ռուսաստանցի Ռուդիկ Մակարեանը, որ 9 հնարաւորէն վաստակած էր 7,5 կէտ՝ միանձնեայ գրաւելով առաջին տեղը:

### Արսէն Զախարեան. «Չելսիի» Յետ Բանակցութիւնները Կը Շարունակուին

Մոսկուայի «Տինամոյի» եւ Ռուսաստանի հաւաքականի կիսապաշտպան Արսէն Զախարեան հաստատած է, որ Լոնտոնի «Չելսին» կը շարունակէ իր հնարաւոր փոխադրման հետ կապուած գործընթացը:

«Հիմա չեմ մտածեր «Չելսի» տեղափոխուելու մասին: Այդ մասին կարող էք հարցնել ակումբին եւ իմ ներկայացուցիչներուն: Կը կարծեմ՝ ամէն ինչ կարգին է: Բանակցութիւնները կը շարունակուին, բայց բոլոր խաղաթուղթերը չեմ բացի», - ըսած է Զախարեան:



### Հայաստանի Պասքեթպոլի Ազգային Հաւաքականը Կարող Է Ընկերական Հանգրուաններ Կատարել Լոս Անճելոսի Մէջ

Պասքեթպոլի Հայաստանի տղոց ազգային հաւաքականը 2023 թուականի Յունիսին կարող է ընկերական հանդիպումներ կատարել Լոս Անճելոսի մէջ: Հայաստանի պասքեթպոլի ֆետերացիայի նախագահութեան նիստի ընթացքին ըսած է ֆետերացիայի նախագահ Հրաչեա Ռոստոմեանը:

«Քալիֆորնիայի մէջ ունինք բաւական մեծ հայկական համայնք, եւ շատնց զաղափար կար կատարելու ընկերական հանդիպումներ Լոս Անճելոսի մէջ: Վերջերս ալ նման առաջարկ ստացած ենք ԱՄՆ-էն եւ մօտակաջ ժամանակներս պէտք է քննարկենք, թէ ինչ ձեւաչափով հնարաւոր է նման հանդիպում կամ հանդիպումներ կազմակերպել», - նշած է ան:

Վերջին տարիներուն Հայաստանի պասքեթպոլի ֆետերացիան աշխուժօրէն կ'աշխատի ԱՄՆ-ի հայկական համայնքին հետ, որու բազմաթիւ ներկայացուցիչները ընդգրկուած են Հայաստանի տարբեր տարիքային հաւաքականներուն մէջ: